# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

38ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ38 (1888) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 13, 2018
VOLUME 38, NO. 38 (1888) SATURDAY OCTOBER 13, 2018

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### ՀՀԿ-ի Կազմաքանդումը

Ուշացումով, սակայն այս շաբաթ սկսաւ նախկին իշխող՝ Հայաստանի Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) կազմաքանդումը: Վերջին օրերուն այդ կուսակցութենէն դուրս եկան մօտ երկու տասնեակ պատգամաւորներ, որոնք գրաւոր յայտարարեցին որ, կը միանան Դեկտեմբեր ամսուն խորհրդարանական արտահերթ ընտրութիւններ կայացնելու վարչապետ Նիկոլ Փաշինեանի առաջարկին: Այժմ արդէն ՀՀԿ-ի եւ ՀՅԴ-ի ձայները բաւարար չեն վարչապետի իրենց սեփական թեկնածուն առաջադրելու համար:

Ուշացումով ըսինք, քանի որ շատեր կը խորհէին, որ յեղափոխութեան յաղթանակէն ու իշխանութեան կորուստէն ետք, այդ կուսակցութեան շարքերէն ներս տեղի պիտի ունենայ «առնէտավազք», ինչպէս որ կը պատահէր անցեալին: Բազմաթիւ պատճառներով այդ տեղի չունեցաւ: Նախ չկար այլ քաղաքական ուժ, որ պատրաստ էր ընդունելու ՀՀԿ-էն հեռացողները: Երկրորդը՝ Սերժ Սարգսեան կը համոզէր իր կուսակիցներուն, որ եթէ մնան համախմբուած, յեղափոխական ալիքը շուտով կը վերանայ եւ իրենք դարձեալ կը վերադառնան իշխանութեան: ՀՀԿ-ի շարքերէն ներս կային շատեր, որ մինչեւ վերջերս հաւատացած էին, որ նման բան կրնայ եւ պատահիլ: Սակայն, անցեալ շաբթուայ իրադարձութիւնները, երբ մի քանի ժամուայ մէջ տասնեակ հազարաւոր ժողովուրդ՝ ընդառաջելով Փաշինեանի կոչին համախմբուեցաւ Ազգային Ժողովի դռներուն առջեւ, ապա, Գագիկ Ծառուկեան «մեղայականով» ներկայացաւ ժողովուրդին, այլեւս յստակ էր որ վերադարձի ճամբաները լրիւ փակուած են ՀՀԿ-ի առջեւ:

Երբ Լեւոն Տէր Պետրոսեան «պալատական յեղաշրջումով» հեռացաւ իշխանութենէն, իր հետ հեռացան նաեւ իր բոլոր կողմնակիցները: Տասը տարուայ լռութենէ ետք միայն, ժողովրդային պահանջով առաջին նախագահը դարձեալ վերադարձաւ քաղաքական ասպարէզ:

Ժամանակն է, որ Սերժ Սարգսեան եւ իր կուսակիցները հետեւին Տէր-Պետրոսեանի օրինակին ու հեռանան թատերաբեմէն: Եթէ նոյնիսկ, յաջորդող ամիսներուն եւ կամ տարիներուն դժգոհութիւն յառաջանայ Նիկոլ Փաշինեանի իշխանութեան նկատմամբ, Հայաստանի ժողովուրդը երբեք ու երբեք պիտի չմտածէ դարձեալ ՀՀԿ-ն իշխանութեան բերելու մասին, քանզի ոչ թէ դժգոհութիւն կայ այդ կուսակցութեան նկատմամբ, այլ անցնող քսանամեակի ընթացքին կուտակուած համատարած ատելութիւն, որմէ ձերբազատուելու համար ՀՀԿ-ն պէտք ունի շատ երկար տարիներու:

«ՄԱՍԻՍ»

## Ծառուկեան Դաշինքը եւ 16 Հանրապետականներ Միացան Դեկտեմբերին Արտահերթ Ընտրութիւններ Կայացնելու Փաշինեանի Առաջարկին

*ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ «Ծառուկեան Դաշինքի» ղեկավարի Գագիկ Ծառուկեանի միջեւ օր մը առաջ կնքուած յուշագիրէն ետք, 16 հանրապետականներ եւս միացան Դեկտեմբերին արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ կայացնելու Փաշինեանի առաջարկին:*

*Հանրապետական խմբակցութեան եւս երկու պատգամաւոր՝ Աւետ Սարգսեանը եւ Ռաֆիկ Գրիգորեանը միացած են խորհրդարանին մէջ ընթացող ստորագրահաւաքին՝ ի պաշտպանութիւն Դեկտեմբերին արտահերթ ընտրութիւններ իրականացնելու վարչապետի նախաձեռնութեան: Այսպիսով ստորագրահաւաքին մասնակցած պատգամաւորներուն թիւը հասած է 16-ի:*

*«Վարչապետի պաշտօնից Փաշինեանի հրաժարականից յետոյ մինչեւ արտահերթ ընտրութիւնները նոր վարչապետ չպէտք է ընտրուի եւ գործող խորհրդարանը պէտք է լուծարուի», - ըսուած է ստորագրահաւաք յայտարարութեան մէջ:*

*Օր մը առաջ, վարչապետ Նիկոլ Փաշինեանն ու «Ծառուկեան» խմբակցութեան ղեկավար Գագիկ Ծառուկեանը արտահերթ խորհրդարանական ընտրութիւնները Դեկտեմբերին կայացնելու մասին յուշագիր ստորագրած էին: Ծառուկեանը յայտարարած էր, որ ամբողջութեամբ կը սատարէ Նիկոլ Փաշինեանին:*




Փաշինեան-Ծառուկեան հանդիպումը Կառավարութեան շէնքէն ներս

*Վարչապետի եւ Ծառուկեանի հանդիպման ժամանակ քննարկած են հայաստանեան ներքաղաքական զարգացումները, այդ շարքին՝ խորհրդարանական արտահերթ ընտրութիւններու իրականացման առնչուող հարցեր:*

*Նիկոլ Փաշինեանին սատարելու մասին յայտարարած էր նաեւ Հանրապետական խմբակցութեան պատգամաւոր, Ազգային ժողովի պետաիրաւական հարցերու յանձնաժողովի նախագահ, նախկին գլխաւոր դատախազ Գէորգ Կոստանեանը:*

*Հոկտեմբեր 10-ին ՀՀ նախա-*

Շար.ը էջ 5

## Հանրային Կարծիքի Համաձայն Հայաստանի Ապագայի Նկատմամբ Կայ Համատարած Վստահութիւն

*Միացեալ Նահանգներու պետութեան կողմէ ֆինանսաւորուող Միջազգային Հանրապետական Հիմնարկի Հայաստանի մէջ կատարած՝ հանրային կարծիքի ուսումնասիրութեան համաձայն, երկրի ապագայի եւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի կառավարութեան նկատմամբ համատարած վստահութիւն գոյութիւն ունի:*

*«Հարցախոյզի արդիւնքներուն մէջ արտացոլուած լաւատեսութիւնը ցոյց կու տայ, որ նոր կառավարութիւնը աննախադէպ առիթը ունի գլխաւորելու անհրաժեշտ բարեփոխումները եւ ամրապնդելու Հայաստանի ժողովրդավարութիւնը,- ըսած է IRI Եւրասիայի հարցերով տարածաշրջանային տնօրէն Ստիվըն Նիքս:*

*Հարցման մասնակիցներու 82 տոկոսը կառավարութիւնը գնահատած է «շատ դրական» (39 տոկոս) կամ «հիմնականին մէջ դրական» (43 տոկոս): 63 տոկոսը կը փափաքի, որպեսզի քաղաքական բարեփոխումները կատարուին արագ, իսկ 34 տոկոսը, ընդհակառակը, աւելի աստիճանական բարեփոխումներու կողմնակից է:*

*Հարցման մասնակիցներու մեծամասնութիւնը (73 տոկոս) կը կարծէ, որ Հայաստանը կ՚ընթանայ ճիշդ ճանապարհով, իսկ 81 տոկոսը կը խորհի, որ ապագան աւելի լաւ պիտի ըլլայ (37 տոկոս) կամ յոյս ունի, որ ապագան աւելի լաւ պիտի ըլլայ (44 տոկոս):*

*Հարցման արդիւնքները ցոյց կու տան նաեւ դրական գնահատական կոռուպցիայի (փտախտի) դէմ ուղղուած ջանքերուն: Մասնաւորապէս, հարցման մասնակիցներու 81 տոկոսը կը հաւատայ, որ կոռուպցիայի խնդիրը բարելաւուած է, իսկ 15 տոկոսը կը կարծէ, որ կոռուպցիան մնացած է նոյն մակարդակի վրայ: Միայն 2 տոկոսը այն կարծիքին է, որ այս ուղղութեամբ իրավիճակն աւելի վատթարացած է:*

*Դէմ-դիմաց կատարուած հարցախոյզին մասնակցած են Հայաստանի տարբեր վայրերուն մէջ բնակող եւ ժողովուրդի տարբեր տարիքի ու սերի հատուածները ներկայացնող քաղաքացիներ՝ Յուլիսի 23-Օգոստոսի 15-ը ժամանակահատուածին:*

## Աթեշեանին Կարգալոյծ Ընելու Պահանջով Թուրքիոյ Հայերը Ստորագրահաւաք Սկսած են

*Թուրքիոյ հայութիւնը նոր ստորագրահաւաք սկսած է Պոլսոյ Հայոց պատրիարքի փոխանորդ Արամ Աթեշեանին կարգալոյծ ընելու պահանջով:*

*Change.org կայքին վրայ սկսած ստորագրահաւաքին միացած են Թուրքիոյ մէջ ապրող բազմաթիւ հայեր՝ կոչ ընելով բոլորին միանալ իրենց:*

*Շարժումի մասնակիցները կը մեղադրեն Աթեշեանին ստախօսութեան, համայնքը եկեղեցիէն հեռացնելու, եկեղեցական գոյքը վաճառքի հանելու, խոստումները չյարգելու ու հայ համայնքի անցյալը չյարգելու մէջ:*

*Ստորագրահաւաքով անոնք կը պահանջեն, ոչ միայն զրկել Աթեշեանին պատրիարքի փոխանորդի պաշտօնէց, այլ նաեւ կարգալոյծ ընել՝ զրկելով կրօնական կոչումէն:*

*Յիշեցնենք, որ անցեալ տարի Աթեշեանը համայնքի ճնշման տակ հրաժարական տուած էր ու համաձայնած՝ Պոլսոյ Հայոց պատրիարքի փոխանորդի նոր ընտրութիւններուն:*

*Հետագային սակայն, Թրքական պետութեան միջամտութեամբ Աթեշեանը կրկին վերադարձաւ պաշտօնին:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Կրակուած ու Չկրակուած Փամփուշտներ, Որոնք Թաղում են Ռեւանշիստների Քաղաքական Հեռանկարը

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

*Երէկ գիշեր տեղի ունեցած քրէական «խրախճանքի» երկու կողմերն էլ այլեւս կենդանի չեն: Կարամելի Ցարուլթ մականունով Ցարութիւն Ղարագիոզեանը նախ սպանել է «Ցուվեցի Կարօ» մականունով Կարօ Կարապետեանին, ապա, ըստ պաշտօնական վարկածի, ինքնասպան է եղել՝ թէեւ ամենեւին էլ չենք բացառում, որ կարող է դարձած լինել վենդետայի զոհ:*

*Երկու նախկին պատգամաւոր-ների քրէական բախումը հաստատապէս վերջինը չի լինելու, որովհետեւ այլեւս քանդուած է քրէաօլիգարխիայի բուրգը ու ջրի երես են դուրս գալու բոլոր հին պատմութիւնները, անցեալ քսանամեակի մեծ ու փոքր ոճիրները: Քոչարեան-Սարգսեան իշխանութեան տարիներին համա-կարգի առաջին դէմքերի մակար-դակով քրէաօլիգարխիայի տարբեր սեգմենտների միջեւ հակասու-թիւնները մեղմուել են, արիւնոտ հաշուեհարդարները կանխուել են, այլ խօսքով՝ եղել են, այսպէս կոչուած, «արբիտրներ», որոնք յանցագործ աշխարհի «օրէնք-ներով» «ճիշտ» ու «սխալ» են որոշել՝ հաստատելով որոշակի ստատուս-քուօ:*

*Հիմա Ռոբերտ Քոչարեանը բանտի ճանապարհին է, Սերժ Սարգսեանը բոլոր առումներով՝ շրջափակուած է, այլ խօսքով՝ չկան «զոն նայողները» ու հին հակասութիւնները ջրի երես են բարձրանալու՝ դառնալով նոր կրակոցների, քրէական հաշուե-յարդարների, «ռազբօրկաների» առիթներ: Քանդւում է քրէաօլիգարխիկ համակարգը ու այդ գործընթացն ուղեկցւում է ցնցումներով, ինչը՝ ինչքան էլ դաժան հնչի, օրինաչափ ու բնական գործընթաց է. ոհմակի ներկայացուցիչները խժռում են միմիանց: Կարեւոր խնդիրն այն է, որ այլանդակ այդ համակարգի փլուզումը չվնասի նոր Հայաստանին, այն յեղափոխու-թեանը, որը դրեց արիւնոտ Հայաստանի վերջակէտը:*

*Ի դէպ, ուշագրաւ է, որ Կարամելի Ցարուլթը երէկ սպանութիւնն իրականացրել է «Պիետրո-Բերետտա» ատրճա-նակով, որով պարգեւատրուել է 2001 թուականի Մարտի 22-ին՝ վարչապետի կողմից: Ահա, թէ ովքեր են եղել նախկին համակարգի կողմից գնահատուած, նրանց կողմից արժեւորուած մարդիկ:*

*Քոչարեանի ու Սարգսեանի իշխանութիւնը յենուել է նման թաթփուկների վրադ սրանք են եղել իշխանութեան յենարանը, սրանք են ապահովել թուացեալ կայունութիւնը ու «անցնցում» ընտրութիւնները, իշխանութեան առաջին դէմքերի ու իրենց թալանի իրաւունքը: Այս քրէապետութիւնն է, որ ծնուեց Հոկտեմբերի 27-ի դիակների վրայով ու քսան տարի շարունակ խոշտանգեց ու հարստահարեց Հայաստանի ժողովրդին՝ լիմոնի պէս ճզմելով պետութիւնը:*

*Քրէաօլիգարխիայի բոլոր ներկայացուցիչներն ունեն արիւնոտ յետագիծ ու հասարակութիւնը տեղեակ է, թէ անցած տարիներին ովքեր են կանգնած հասարակական հնչեղութիւն ունեցող սպանութիւնների թիկունքում, ժողովուրդը լաւ գիտի «նեմեցների», «թոխմախների», միւսների ոճիրների մասին: Բազմաթիւ եմ արիւնոտ սպանութիւնները, անգամ դէպքերը, երբ քրէօլիգարխիայի կարկառուն ներկայացուցիչներն ուղղակիօրէն մասնակից են եղել քրէական հաշուեյարդարների, որոնցից ամենայայտնին, թերեւս, Երրորդմասցի Լիովիկի սպանութեան դրուագն է: Չենք ուզում սրուել մանրամասներին, յիշել նաեւ այլ քրէական հաշուեյարդարներ: Ոչինչ ու ոչ ոք չի մոռացուել. ըստ հարկի՝ ամէն ինչ մասին կը գրենք հանգամանալից:*

*Անցած քսանամեակում այս խուժանն է ապահովել իշխանութեան վերարտադրութիւնը, նրանց հետեւում թաքնուած էր Ռոբերտ Քոչարեանը մեծ-մեծ ճամարտակում «միակ տղամարդ» լինելու մասին, նրանցով շրջապատուած Սերժ Սարգսեանն էր խօսում «տոկոսներ խփելու» մասին: Հիմա Քոչարեանն ու Սարգսեանը չկան, ու նրանց յենարանի ներսում սկսուել է կատարեալ գզվռտոց. երեկուայ արիւնոտ հաշուեյարդարը մեծ շղթայի մի փոքր հատուածն է, քրէաօլիգարխիայի վախճանի առաջին դրսեւորումներից մէկը: Միւսները դեռ փորձելու են հաշիւներ մաքրել, դեռ շատ ենք լսելու կորած փողերի, նոր կրակոցների, քրէական խրախ-ճանքների մասին, որովհետեւ հին համակարգը փլուզուել է, իսկ արիւնոտ ձեռքերով ու յետագծով այս մարդիկ տեղ չունեն Նոր Հայաստանում: Նոր Հայաստանի մարդասիրական միջանցքը չի կարող փրկօղակ լինել դիակների վրայով հարստութիւն դիզած ու «արտօնեալ» դարձած այս մարդկանց համար:*

*Երէկուայ միջադէպը, արիւնոտ հաշուեյարդարը սոսկալի հարուած էր հակայեղափոխութեան ռեւանշի մտայնութեանը: Սպանում եւ ինքնասպանւում են այն մարդիկ, որոնք Քոչարեան-Սարգսեան զոյգի գողապետութեան դէմքերն են եւ պէտք է ապահովէին ռեւանշը տեղերում. այլեւս դիակ դարձած այս մարդիկ, նրանց տեսակը պէտք է դաւադրութիւն կատարէին յեղափոխութեան ու Նոր Հայաստանի դէմ:*

*Ցուվեցի Կարոյի ու Կարամելի Ցարուլթի հետ սպանուել է Ռոբերտ Քոչարեանի ու Սերժ Սարգսեանի քաղաքական հեռանկարը, նրանց վերադարձի աղօտ հնարաւորութիւնը:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

# Կասեցուեց Քոչարեանի Քայլը. Քրէա-քաղաքական Պայքիւն

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*Հանրապետական խմբակ-ցութեան ներկայացուցիչ, նախկին գլխաւոր դատախազ Գէորգ Կոստանեանը յայտարարել է, որ սատարում է Նիկոլ Փաշինեանի օրակարգին: ՀՀԿ խմբակցութիւնը լքելու մասին յայտարարութիւն է արել նախկին ոստիկանապետ Ալիկ Սարգսեանը: Դա տեղի է ունենում հանգստեան բուռն օրերից յետոյ, երբ ԱԱԾ-ն դեռեւս չմանրամասնուած պատճառներով ձերբակալել է Ռոբերտ Քոչարեանին եւ Արմէն Գէորգեանին մերձաւոր գործարար Սամուէլ Մայրապետեանին, իսկ դեռեւս անյայտ հանգամանքներում էլ միմիանց են սպանել Ցուվեցի Կարոն եւ Կարամելի Ցարուլթը՝ Ցարուլթը կրակել է Կարոյին, իսկ յետոյ՝ ըստ վարկածի, ինքնասպանութիւն կատարել:*

*Ցուվեցի Կարոն եւ Կարամելի Ցարուլթը Հայաստանի այսպէս կոչուած քաղաքական համակարգի ֆիգուրներից էին եւ նրանց «յարաբերութիւնների» ողբեր-գական պարզաբանումը գործնա-կանում նախկին իշխող համակարգում յարաբերութիւնների ներկայիս վիճակի ինդիկատորն է:*

*Համակարգը քայքայւում է, եւ դիմադրութեան ցանկացած փորձ ոչ թէ աւելացնում է ուժերը, այլ արագացնում դրանց սպառումը, քանի որ անջատուած է գլխաւորը՝ կոռուպցիոն սնուցումը: Իշխող համակարգը զրկուած է իր առանցքային սնուցման աղբիւրից՝ կոռուպցիայի եւ զանձագողութեան հնարաւորութիւնից: Իսկ այդ դէպքում անխուսափելի է դառնում քայքայումը, եւ այստեղ ստեղծւում է առանձնայատուկ իրավիճակ ու շերտաւորում:*

*Այդ ֆոնին խիստ յատկանշական է, որ հանգստեան օրերի այդ բուռն իրադարձութիւններից յետոյ քաղաքական քայլ է կատարում նախկին գլխաւոր դատախազը, որը թերեւս նախկին կարգավիճակի բերումով աւելի զգայուն է ըմբռնում տեղի ունեցածի կառուցուածքը եւ փիլիսոփայութիւնը:*

*Գէորգ Կոստանեանը անում է Նիկոլ Փաշինեանին ու հանրային օրակարգին սատարող քաղաքական յայտարարութիւնը, որը Ապրիլի 23-ի Սերժ Սարգսեանի հրաժարականի տեքստից յետոյ թերեւս միակ քաղաքական յայտարարութիւնն է, որ այս ամիսների ընթացքում հնչում է ՀՀԿ շրջանակից:*

*Այն դէպքում, երբ Սերժ Սարգսեանն իր հրաժարականի տեքստով ՀՀԿ-ին տուել էր իշխանութիւնը թողնելու եւ քաղաքականութեամբ զբաղուելու առատ հնարաւորութիւն: Բայց Հանրապետական կուսակցութիւնը դրա փոխարէն առաջնորդուեց Ռոբերտ Քոչարեանի բանաձեւով, համարելով, թէ Քոչարեանը ճիշտ է՝ Սերժ Սարգսեանը սխալ, ու իշխանութիւնը ճամպրուկ չէ, որ յանձնես ինչ որ մէկին:*

*Միւս կողմից, ընթացքում ակնյայտ դարձաւ, որ այդ բանաձեւի տրամաբանութիւնը ՀՀԿ մի շարք ներկայացուցիչներին հերթով հանրութեան «դատին» յանձնելն է, թերեւս այնքան, մինչեւ հասարակութիւնը «կը յագենայ» եւ այդպիսով ձեռք կը քաշի Քոչարեանից, կամ էլ հնարաւոր կը լինի այդ բանաձեւով առնուազն շահել որոշակի ժամանակ: Ակնառու էր նաեւ, որ ՀՀԿ մի շարք ներկայացուցիչներ, յատկապէս «քաղաքական թեւից», կամայ, թէ ակամայ ընդունեցին այդ բանաձեւը:*

*Խաղից առաջինը դուրս է գալիս Գէորգ Կոստանեանը, որն ինհարկէ առանձնապէս աշխոյժ խաղի մէջ չէր էլ մտել: Ըստ ամենայնի, տուեալ պարագայում աւելի ճիշտ կը լինի խօսել Սերժ Սարգսեանի խաղի մէջ մտնելու մասին. Նա Սեպտեմբերի վերջին վերականգնեց ՀՀԿ ԳՄ նիստերի ռեժիմը, ինչը փոխում է այսպէս ասած նախկին իշխանութեան տրամաբանութեան ռեժիմը: Այդ իմաստով յատկանշական էր, որ Հոկտեմբերի 2-ին «հանրութեան դատին» յանձնուողները այլեւս ՀՀԿ-ից չէին միայն, կամ արդէն աւելի շատ ՀՅԴ-ն ու ԲՀԿ-ն էին:*

*Դրանից յետոյ ՀՀԿ-ում սկսուեց հանրութեան «խնամքին» յանձնուելու գործընթաց, «Նիկոլը ճիշտ էր, մենք սխալուեցինք» բանաձեւի տրամաբանութեամբ:*

*«ԼՐԱԳԻՐ»*

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը


**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**



Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Արմէն Աշոտեան. «ՀՀԿ-ի Պատգամաւորներուն Վրայ Ճնշումներ Եղած Են»



ՀՀԿ փոխնախագահ Արմէն Աշոտեան

*«Մէկ շաբաթ առաջ ՀՀԿ խմբակցութիւնը ընդունեց յայտարարութիւն վերջին իրադարձութիւնների հետ կապուած: Այդ յայտարարութիւնը քննարկւում էր եւ իմ գործընկերներից, որոնք ստորագրել են Դեկտեմբերին խորհրդարանական ընտրութիւններ անցկացնելու դիրքորոշման տակ, որեւէ մէկը չէր արտայայտել այլ կարծիք: Այնուհանդերձ, իմ ունեցած տեղեկութիւններով՝ մի շարք պատգամաւորների հանդէպ եղել են ճնշումներ, գործադրուել է պետական ռեփրեսիւ ապարատը (ճնշողական մեքենան) իր բոլոր հնարաւորութիւններով: Նաեւ փորձում էին գտնել որոշ պատգամաւորների վրայ արտերկրից ներազդելու հնարաւորութիւններ», խորհրդարանին մէջ լրագրողներուն հետ զրոյցի ժամանակ նման յայտարարութիւն ըրած է ԱԺ արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ, ՀՀԿ փոխնախագահ Արմէն Աշոտեանը՝ անդրադառնալով Դեկտեմբերին արտահերթ ընտրութիւններ իրականացնելու նախաձեռնութեան տակ ստորագրած 14 պատգամաւորներու քայլին, որոնցմէ 9-ը ՀՀԿ խմբակցութեան անդամներ են:*

*Արմէն Աշոտեանը չէ բացառած, որ որոշ պատգամաւորներ նաեւ ինքնակամ միացած են այդ նախաձեռնութեան:*

*Լրագրողները փորձած են առաւել յստակ եւ փաստարկուած յայտարարութիւններ ստանալ Արմէն Աշոտեանէն, թէ ինչ ճնշումներու մասին է խօսքը: «Ես ասացի այնքան, ինչքան ասացի: Իմ ունեցած տեղեկութիւններով այդ ճնշումները եղել են, բայց ինչպէս ասացի, չեմ բացառում, որ եղել են ինքնակամ դարձի եկածներ՝ ինչպէս այս օրերին սիրում է ներկայացնել ընդդիմադիր մամուլը: Բոլոր դէպքերում ակնյայտ է, որ Նիկոլ Փաշինեանը փորձում է ինտուլկենցիաներ (արտօնութիւններ) պարտադրել, ֆէյսբուքեան սթաթուսներում գրում է ով է ճիշդ, ով է սխալ, ում պէտք է քաջալերել, ում չպէտք է քաջալերել: Այդ գործընթացն, իհարկէ, միջնադար է յիշեցնում, երբ կաթոլիկ եկեղեցու ղեկավարները փորձում էին մեղքերի թողութեան փաստաթղթեր թողարկել, այդ թւում՝ նաեւ ապագայ մեղքերի: Չեմ կարծում, որ Նիկոլ Փաշինեանն այն անձն է, որը պէտք է ներում շնորհի կամ ինդուլգենցիաների (ներողամտութիւններու) բաժանմամբ զբաղուի: Ես այդպիսի մէկ անձի եմ ճանաչում, նրա անունը Նիկոլ Փաշինեան չէ՝ Յիսուս Նազովրեցի է»,- ըսած է Արմէն Աշոտեանը:*

*ԲՀԿ-ի յուշագիր ստորագրելու քայլը Արմէն Աշոտեանը չէ մեկնաբանած, ըսած է՝ այդ իրենց իրաւունքն է եւ ՀՀԿ-ն յարգանքով կը վերաբերի այդ քայլի: Նոյն կերպ կը վերաբերուէին նաեւ, եթէ ՀՅԴ-ն նման դիրքորոշման յանգի:*

# Սկսած են Ընտրական Նոր Օրէնսգիրքի Շուրջ Հերթական Քննարկումները





Ընտրական նոր օրէնսգիրքի շուրջ ընթացող քննարկումը

*Կառավարութեան մէջ մեկնարկած է Ընտրական նոր օրէնսգիրքի շուրջ հերթական քննարկումը:*

*Առաջարկուող փաթեթի առանցքային դրոյթը տարածքային՝ ռեյթինկային (վարկանիշային) ընտրակարգի վերացումն է:*

*«Հիմնական փոփոխութիւնները վերաբերում են խաղի կանոններին, մասնաւորապէս, սահմանուում է, որ Ազգային ժողովի ընտրութիւններն անց են կացուելու սովորական համամասնական ընտրակարգերով՝ ֆիքսուած ցուցակներով, այսինքն՝ ոչ ռեյթինկային, ռեյթինկային (վարկանիշային, ոչ վարկանիշային) ընտրակարգն ամբողջութեամբ մերժւում է», - ըսած է վարչապետին կից Ընտրական օրէնսդրութեան բարեփոխումներու յանձնաժողովի քարտուղար Դանիէլ Իոաննիսեանը:*

*Իոաննիսենը նաեւ նշած է, որ կ'առաջարկուի իջեցնել կուսակցութիւններու եւ դաշինքներու համար անցողիկ շեմը, մասնաւորապէս գործող 5 եւ 7 տոկոսներու փոխարէն սահմանել 4 եւ 6 տոկոսի անցողիկ շեմ:*

*«Նախատեսուում է, որ նուազագոյն քանակը քաղաքական ուժերի, որոնք որ պէտք է անցնեն Ազգային ժողով՝ անկախ անցողիկ շեմից, այսինքն՝ եթէ բաւարար թւով կուսակցութիւններ, կամ դաշինքներ անցողիկ շեմը չյաղթահարեն այժմ օրէնսգրքով սահմանուած է երեք, սահմանուելու է չորս: Այսինքն՝ օրէնսգրքով երաշխաւորուում է, որ չորս քաղաքական ուժից է նուազագոյնը ձեւաւորուելու յաջորդ խորհրդարանում»,- ըսած է յանձնաժողովի քարտուղարը:*

*Իոաննիսեանը նշած է, որ յանձնաժողովը հրապարակած է Ընտրական օրէնսդրութեան բարեփոխումներու հայեցակարգը, հրապարակուած է նախագիծը եւ շուտով այն կը հաստատուի գործադիրի կողմէն եւ կ'ուղարկուի խորհրդարան:*

# Կարօ Կարապետեանի Սպանութեան Պատճառը Գոյքային Վէճը Եղած է



Անձնասպան եղած նախկին պատգամաւոր Յարութիւն Ղարագիոզեան (ձախին) եւ սպաննուած նախկին պատգամաւոր Կարօ Կարապետեան

*Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Կարօ Կարապետեանի սպանութեան պատճառը, ըստ նախնական վարկածի, գոյքային հարցերու շուրջ վիճաբանութիւնը եղած է:*

*Ըստ Քննչական կոմիտէին, Երեւանի Նորք-Մարաշ վարչական շրջանին մէջ գտնուող «Այգի» ռեստորանային համալիրին մէջ ժամը 22:40-ի սահմաններուն հնչած կրակոցներէն՝ «Էրեբունի» բժշկական կեդրոն տեղափոխուելու ճանապարհին մահացած է Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Կարօ Կարապետեանը, որ հանրութեան յայտնի էր «Եուվեցի Կարօ» մականուամբ:*

*Յաջորդ օրը Քննչական կոմիտէի ու Ոստիկանութեան հաղորդագրութիւններէն յայտնի դարձած է, որ Ջուլունիի մէջ յայտնաբերուած է Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Յարութիւն Ղարագիոզեանի («Քարամելի Յարութ») դին՝ գլուխի շրջանին հրազէնային վնասուածքով: Մահացածի աջ ձեռքին ատրճանակ եղած է, նախնական տուեալներով, Ղարագիոզեանը ինքնասպանութիւն գործած է:*

*ԱԺ նախկին պատգամաւորը, փաստօրէն, կը կասկածուէր «Եուվեցի Կարօ»-ի սպանութեան մէջ, որովհետեւ սպանութեան դէպքի վայրին մէջ յայտնաբերուած էր Յարութիւն Ղարագիոզեանին պատկանող «Փիեթրօ-Պերեթթա» ատրճանակ, որ անոր 2001-ի մարտին պարգեւատրած էր այն ժամանակուայ վարչապետ, Հանրապետական կուսակցութեան նախկին նախագահ Անդրանիկ Մարգարեանը:*

---

*Ներուն ան յայտնի դարձած է Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի օրօք՝ մայրաքաղաքի յայտնի Հիւսիսային պողոտայի կառուցման ժամանակ, երբ այդտեղ տարածքներ ձեռք ձգած էր, տեղւոյն բնակիչները իրենց բնակարաններէն տեղահան ընելով:*

# Սամուէլ Մայրապետեանին Մեղադրանք Առաջադրուած է



Գործարար Սամուէլ Մայրապետեան

*Գործարար Սամուէլ Մայրապետեանին մեղադրանք առաջադրուած է Քրէական օրէնսգիրքի 38-311 (Կաշառք ստանալուն օժանդակելը) յօդուածով, «Ազատութեան»-ն ըսած է Մայրապետեանի փաստաբան Կարէն Բատիկեանը:*

*Բատիկեանի փոխանցմամբ, Մայրապետեանը մեղքը չէ ընդունած:*

*«Ազատութեան» հարցին, թէ այս գործը կապ ունի՞ «Մարտ 1»-ի գործի հետ, փաստաբանը ըսած է, որ ոչ:*

*Յայտնենք որ, շրջանառուող որոշ տեղեկութիւններու համաձայն, «Մարտի 1»-ի դէպքերու օրերուն գործարարուհի Սիլվա Համբարձումեան իր դրամատնային հաշիւէն մեծ գումար փոխանցած է Սամուէլ Մայրապետեանին: Նոյն աղբիւրները կը յայտնեն, որ այս վերջինը այդ գումարները օգտագործած է վճարումներ կատարելու համար ժողովուրդի վրայ կրակող զինեալներուն:*

*Երկուքի միջեւ տեղի ունեցած առերեսման ժամանակ Համբարձումեան հաստատած է որ, գումար փոխանցած է սակայն չի յիշեր ինչ նպատակով, քանի որ տասը տարի անցած է այդ թուականէն:*

*Դատարանը որոշեց բաւարարել դատախազութեան միջնորդութիւնը եւ որոշում կայացուց երկու ամսով կալանաւորել Մայրապետեանին:*

*Յատուկ քննչական ծառայութիւնը գործարարը ձերբակալած էր Հոկտեմբերի 6-ին:*

*Սամուէլ Մայրապետեանը գործունէութիւն կը ծաւալէ շինարարութեան ոլորտի մէջ, «Թոյոթա Երեւան» ընկերութեան նախագահն է, եւ անոր կը պատկանին Հ2 հեռուստաընկերութիւնը:*

*Հանրութեան լայն շրջանակ-*

## ԼՈՒՐԵՐ

# Միացեալ Նահանգները Յայտարարած է Հայաստանին Ուղղուող Աջակցութեան Ծաւալներու Աւելացմանմասին




Ռիչարտ Միլսը հրաժեշտի հանդիպման ընթացքին գիրք կը նուիրէ վարչապետ Նիկոլ Փաշինեանին

*ՀՀ-ի մէջ ԱՄՆ դեսպան Ռիչըրտ Միլս, 9 Հոկտեմբերին, յայտարարած է Հայաստանին ուղղուող ԱՄՆ աջակցութեան ծաւալներու յաւելումին մասին:*

*Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպանութեան տեղեկութիւններով՝ վերջերս, Միացեալ Նահանգները, քաղաքական անցման հետ կապուած հայաստանեան նախաձեռնութիւններուն աջակցելու նպատակով 14 միլիոն ԱՄՆ տոլարի յաւելեալ արտաքին աջակցութեան միջոցներ տրամադրած է Հայաստանին, իսկ յառաջիկայ տարուան ընթացքին՝ Միացեալ Նահանգներ մտադիր է տրամադրելու աւելի քան 26 միլիոն ԱՄՆ տոլար՝ 2018 ֆինանսապիւտճէթային տարուան արտաքին աջակցութեան միջոցներէն, որ 20 միլիոն տոլարով աւելի է՝ յայտով Հայաստանի համար սկզբնապէս պահանջուած ֆինանսաւորումէն:*

*Այս միջոցները պիտի օժանդակեն քաղաքական գործընթացներու հետ կապուած գերակայ ծրագիրներուն, քաղաքացիական հասարակութեան եւ անկախ ԶԼՄ-ներուն: Այդ միջոցները նաեւ պիտի ուղղուին Վարչակազմի կողմէն իբրեւ արտաքին քաղաքականութեան գերակայութիւն սահմանուած գործարար եւ առեւտրային հնարաւորութիւններու ընդլայնման՝ ամերիկեան եւ հայկական ընկերութիւններու համար, ինչպէս նաեւ աջակցելով ուժանիւթի բարեփոխումներուն, նաեւ Հայաստանի արագ քայլերով աճող տեղեկատուական արհեստագիտութիւններու ոլորտին:*

*Հայաստանին ցուցաբերուող ԱՄՆ աջակցութիւնը կը ներառէ երկկողմ համագործակցութեան տարբեր ուղղութիւնները, ինչպէս՝ կառավարում, թափանցիկութիւն եւ հաշուետուողականութիւն, քաղաքական ներառում, օրէնսդրական հզօրացում եւ տեղական ինքնակառավարման բարեփոխումներ:*

*Հայաստանի քաղաքական անցման աջակցելու համար՝ այս ծրագիրները պիտի օգնեն վերակառուցելու բազմակուսակցական քաղաքական համակարգերը եւ պիտի նպաստեն ազատ ու արդարացի ընտրութիւններուն: Աջակցութիւնը նաեւ կ՝ուղղուի քաղաքացիական հասարակութեան հզօրացման ու անկախ ԶԼՄ-ներու հասանելիութեան բարելաւման:*

*Հայաստանի մէջ իր դիւանագիտական առաքելութիւնը աւարտելուն առթիւ Ռիչարտ Միլսը հրաժեշտի հանդիպում ունեցած էր վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ:*

# Երեւանի մէջ Մեկնարկած է Ֆրանքոֆոնիայի Միջազգային Կազմակերպութեան Նախարարական Համաժողովը



Երեւանի «Կարէն Դեմիրճեանի» անուան համալիրի մուտքը, ուր տեղի կ՛ունենան Ֆրանքոֆոնիայի ժողովները

*Երեւանի մէջ մեկնարկած է Ֆրանքոֆոնիայի միջազգային կազմակերպութեան նախարարական համաժողովը:*

*Նախարարական համաժողովը կ՛իրականացուի «Կարէն Դեմիրճեանի» անուան մարզահամերգային համալիրին մէջ: Երկօրեայ համաժողովին կը մասնակցին Ֆրանսախօս երկիրներու անդամ արտաքին գործոց նախարարները: Այդ ընթացքին հիմնական կը քննարկուին բուն գագաթնաժողովի օրակարգային հարցերը, կը համաձայնեցուին ընդունուելիք յայտարարութիւնները, ստորագրուելիք փաստաթուղթերը:*

*Բուն գագաթնաժողովը պիտի իրականացուի 11-12 հոկտեմբերին:*

*«Ազատութեան» հետ զրոյցներու ժամանակ Հայաստանի արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեանը եւ նախարարութեան խօսնակ Տիգրան Բալայեանը ընդգծած են, որ կ՛ակնկալուի, որ բանաձեւերուն մէջ ըլլայ նաեւ ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման վերաբերող բանաձեւ:*

*«Մի շարք փաստաթղթեր կան՝ գագաթնաժողովի եզրափակիչ հռչակագիրը ... նաեւ նախատեսուում է, որ ինչպէս արդէն երեք նախորդ գագաթնաժողովներին եղել է, գագաթնաժողովը յայտարարութիւն կ՛ընդունի Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապէս խաղաղ կարգաւորման վերաբերեալ»:*

*Նախարարական համաժողովէն ետք, 10 Հոկտեմբերին տեղի պիտի ունենայ ֆրանքոֆոն երկիրներու տնտեսական փորումը:*

*Հոկտեմբերի 11-ին Ֆրանքոֆոնիայի շաբաթը Հայաստանի մէջ պիտի ամփոփուի կալա համերգով, որուն նախատեսուած էր Շարլ Ազնաւուրի ելոյթը:*

*«Այս պահի դրութեամբ կարող եմ ասել, որ ամէն ինչ գնում է ըստ փլանաւորածի, նոյնիսկ աւելին: Իհարկէ, մեծ կորուստ էր մեզ համար Ազնաւուրի մահը, որը նաեւ պէտք է համերգին հանդէս գար: Բայց կալա համերգի երրորդ մասը ամբողջութեամբ Բուն գագաթնաժողովի, ինչպէս նաեւ յարակից միջոցառումների նուիրուած է լինելու Ազնաւուրին եւ նրա ժառանգութեանը», - փոխանցած է Տիգրան Բալայեանը:*

*«Ազատութեան» հարցին, թէ արդեօք Հայաստանի համար նշանակալի այս իրադարձութիւնը կ՛անցնի ծրագրուածին համապատասխան, ի նկատի ունենալով հայաստանեան մամուլի մէջ տեղ գտած մտավախութիւնը, թէ երկրի մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները կրնան բացասաբար անդրադառնալ գագաթնաժողովի կազմակերպչական աշխատանքներուն վրայ, արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Տիգրան Բալայեանը պատասխանած է. - «Թէ՛ բուն գագաթնաժողովի, թէ՛ յարակից միջոցառումների ծրագրից որեւէ շեղում չի եղել: Հակառակը, նոր իշխանութիւնները բաւականին հարստացրել են ծրագիրը: Ամբողջական պատասխանատուութեամբ կարող ենք յայտարարել, որ չունենք որեւիցէ շեղում նախատեսուած ծրագրերից»:*

# Կարօ Փայլան կը Հակադարձէ Թուրքիոյ Փոխնախագահի Հակահայ Յայտարարութիւններուն

*Թուրքիոյ քրտամէտ ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան (HDP) պոլսահայ պատգամաւոր Կարօ Փայլան մեկնաբանած է Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ Թուրքիոյ փոխնախագահ Ֆուհաթ Օքթայի հակահայկական յայտարարութիւնը:*

*Bianet.org լրատուական կայքին տուած մեկնաբանութեան մէջ Փայլան նշած է, որ Թուրքիոյ նոր դիրքորոշումը հիմնուած է ոչ թէ առերեսման, այլ ժխտողականութեան ու ձուլման վրայ եւ այս տեսանկիւնէ նոր թշնամիներու կարիք կայ:*

*Ըստ Փայլանի՝ Թուրքիոյ մէջ բնակող հազարաւոր հայերու ցաւին նկատմամբ ոչ մէկ կարեկցանք պարունակող յայտարարութիւնները այնտեղ ապրող ժողովուրդներուն ոչ մէկ օգուտ կու տան:*

*Փայլան, նշելով, որ նման արտայայտութիւնները «թրքական ազգայնական մտածելակերպ»ի արդիւնքն են, աւելցուցած է. «Անոնք, որոնք դուք թշնամի դարձուցած էք, մեր ազգականներն են, մեր քաղաքացիներն են»:*

*Փայլան Օքթայի յայտարարութեան արձագանգած է նաեւ «Twitter»-ի մէջ կատարած արձանագրութեամբ.*

*«Հայկական սփիւռքը քայսերիցին, մալաթիացին, սթամպուլցին, պուրսացին, թեքիրտաղցին, տիարպեքիրցին է: Անոնք, որոնց դուք թշնամի դարձուցած էք մեր բարեկամներն ու մեր քաղաքացիներն են: Թրքական թէզերը ցեղապաշտական են եւ ցեղասպան: Մեր ցաւի օճախը Թուրքիոյ մէջ է եւ միայն Թուրքիոյ մէջ հնարաւոր է զայն բուժել»:*

*Աղբիւրը կը յիշեցնէ, որ Թուրքիոյ փոխնախագահ Ֆուաթ Օքթայ, ելոյթ ունենալով Թուրքիոյ պատմագիտական ընկերութեան կողմէ կազմակերպուած «Թրքական պատմութեան համաժողովի» բացման, անդրադարձած էր Հայոց Ցեղասպանութեան: Օքթայ, նշելով, որ իրենք Հայկական սփիւռքի ճնշումով Թրքական թէզերը արգիլող խորհրդարաններու որոշումները չենք յարգեր, ըսած էր .*

*«Անոնք, որոնք կը ցանկային 1915-ի դէպքերը օգտագործելով մեր պատմութիւնը սեւցնել, հակառակ իրենց ջանքերուն, չեն հասած իրենց նպատակներուն՝ բացառութեամբ մեր երկրի նկատմամբ բացայայտ թշնամանք ունեցող պետութիւններուն: Յատկապէս 2015-էն առաջ աշխուժացած զրպարտող արշաւները արդիւնք չտուին՝ շնորհիւ մեր երկրի կեցուածքին, Թուրքիոյ պատմագիտական ընկերութեան նման պետական հաստատութիւններու ջանքերուն եւ մեր դիւանագէտներու աշխատանքին»:*

# Աւստրալահայ Ընտանիքը Որոշած է Հայրենադարձուիլ

*Հոկտեմբերին 10-ին Հայաստան ժամանած է աւստրալահայ Արա Աղաճանեանի եւ Մարինա Օկանէսեանի ընտանիքը, երկու զաւակներուն հետ:*

*Ընտանիքը որոշած է հայրենադարձուիլ: Անոնք արդէն տուն գնած են Երեւանի մէջ, իսկ 13 տարեկան Գայիանէն եւ 10 տարեկան Արսէնը պիտի ուսանին «Այբ» դպրոցին մէջ:*

*Արա Աղաճանեան որոշած է ներդրում ընել Հայաստանի մէջ եւ նոր աշխատատեղեր բանալ:*

*Այս մասին կը յայտնեն ՀՀ Սփիւռքի նախարարութենէն:*

# Փարիզի Մէջ Տեղի Ունեցաւ Շարլ Ազնաւուրի Հոգեհանգիստի Արարողութիւնը




*Փարիզի հանրայայտ Հաշմանդամներու տուն յուշահամալիրին մէջ տեղի ունեցաւ աշխարհահռչակ Շարլ Ազնաւուրի հոգեհանգիստը:*

*Հաշմանդամներու տունը կը միաւորէ Ֆրանսայի ռազմական պատմութեան առնչուող թանգարաններ, այնտեղ կը գտնուի Նափոլէոն Պոնափարթի դամբարանը:*

*Ազնաւուրի աճիւնը պատուած էր Ֆրանսայի ազգային դրօշով: Աճիւնը յուշահամալիրի կեդրոնական հրապարակ բերուեցաւ Հայոց ցեղասպանութեան խորհրդանիշերէն մէկը դարձած «Տլէ եաման»ի մեղեդիի ներքոյ՝ դուդուկի կատարմամբ:*

*Շարլ Ազնաւուրի աճիւնի կողքին տեղադրուած էր Հայաստանի դրօշի գոյներով ծաղկեպսակ, զինուորական նուագախումբը կատարած է հայերէնով երգ մը:*

*Ֆրանսացիները հոգեհանգիստի արարողութիւնը անուանած են «Յարգանքի ազգային տուրք»:*

*Էմանուէլ Մաքրոնէն բացի, արարողութեան մասնակցան Ֆրանսայի նախկին նախագահներ՝ Նիքոլա Սարքոզին եւ Ֆրանսուա Հոլանտը:*

*Հայաստանի պատուիրակութեան կազմին մէջ էին վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ տիկնոջ հետ, նախագահ Արմէն Սարգսեանը՝ տիկնոջ հետ, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, Արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեանը, Մշակոյթի նախարար Լիլիթ Մակունցը:*

*Իր խօսքով Նիկոլ Փաշինեանը ափսոսանքով նշեց, որ չհասցուց անձամբ ծանօթանալ Շարլ Ազնաւուրի հետ, ով ընդամէնը օրեր անց Ֆրանսայի նախագահի հետ պիտի գար Երեւան՝ մասնակցելու Ֆրանքոֆոնիայի գագաթնաժողովին:*

*«Ուզում եմ հաւաստիացնել, որ անմնացորդ նուիրուած եմ այն գործին, որ Նոր Հայաստանը պիտի դարձնի այնպիսին, ինչի մասին Դուք երազում էիք: Ազատ եւ Երջանիկ Հայաստանն իսկապէս արժանի գնահատանքը կը լինի Հայ ժողովրդի եւ Հայաստանի նկատմամբ Ձեր ունեցած անուրանալի վաստակին: Խոնարհւում եմ Ձեր առաջ՝ մեծ ֆրանսացի, մեծ հայ, մեծ արուեստագէտ, մեծ մարդասէր: Ննջի՛ր խաղաղութեամբ, սիրելի Վարպետ», - իր խօսքը եզրափակած է Նիկոլ Փաշինեանը:*

*Էմանուէլ Մաքրոնը իր ելոյթին մէջ ըսաւ. «Շարլ Ազնաւուրը դարձած է Ֆրանսայի դէմքը: Ազնաւուրի երգերը նախ եւ առաջ բառեր են, բառեր, որոնք եկած եւ դպած են մեր սրտերուն»:*

*Հոգեհանգիստին մասնակցած են նաեւ հանրայայտ ֆութպոլիստ Եուրի Ճորքայէֆը, որ «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է.- «Ազնաւուրը աւելին էր, քան հայ ֆրանսացի երգիչ: Ան աշխարհի քաղաքացի էր, սիրոյ դեսպան, ժողովուրդի դեսպան: Երբ կը լսես անոր երգերը, կը հասկնաս, որ իւրաքանչիւրը սրտիդ մօտ է: Ան կը գրէր մարդոց մասին ու մարդոց համար»:*

*Ազնաւուրի մտերիմ բարեկամներէն աշխարհահռչակ Միրէյ Մաթիոն «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ շեշտած է մեծ շանսոնիէի հայկականութիւնը, հայ ըլլալը՝-Այսօր ես տխուր եմ, բայց ինծի համար մեծ պատիւ է խօսիլ Շարլի մասին, որ աշխարհի ամենայայտնի ֆրանսացի երգիչն էր: Ես անոր հետ կապուած շատ յիշողութիւններ ունիմ: Իմ գործունէութեան սկիզբը ինք գրած է իմ առաջին երգը, եւ ես այնքան հպարտ եմ անով: Ան մեծ արուեստագէտ էր: Կ՚ըսէր՝ ես հարիւր տոկոսով ֆրանսացի եմ եւ հարիւր տոկոսով հայ: Ան միշտ կը խօսէր Հայաստանի մասին»:*

---

# Արաբական Աշխարհ
# Սէուտ Արաբիոյ Լրագրողի Սպանութիւնը Պոլսոյ Մէջ

*Միջազգային լրատուամիջոցներէն կ՚իմանանք թէ քանի մը օր առաջ, Պոլսոյ մէջ խորհրդաւոր պայմաններու մէջ, սպաննուած է սէուտցի լրագրող Ժամալ Խաշողճին: Ենթական ժամանակէ մը ի վեր, կ՚աշխատակցէր* Whashington Post*ին: Թրքական հետազօտական շրջանակներու համաձայն եղածը՝ կանխամտածուած ոճրագործութիւն մըն է, որ գործադրուած էՊոլսոյ Սէուտական Արաբիոյ հիւպատոսարանին մէջ: Այս կապակցութեամբ սէուտական իշխանութիւնները ցարդ ոչ մէկ մեկնաբանութիւն չեն տուած:*

*Թուրք պաշտօնեայ մը* Associated Press *մամլոյ, գործակալութեան յայտնած է թէ՝ ըստ գաղնտի ոստիկանութեան տեղեկատւութեան, Ժամալ Խաշողճին սպաննուած է հիւպատոսարանին մէջ:*

*Նշենք նաեւ որ 59-ամեայ Խաշողճին, շուրջ տարիէ մը ի վեր, նախընտրած է ԱՄՆ-ի մէջ բնակիլ, որպէս աքսորական: Թուրքիա կատարած իր վերջին այցելութեան ընթացքին, Պոլսոյ սէուտական հիւպատոսարանին մէջ, իր անյայտանալը կրնայ մեծապէս վատթարացնել Թուրքիոյ եւ Սէուտական Արաբիոյ միջեւ եղած արդէն իսկ դիւրաբեկ յարաբերութիւնները:*

*Հետաքրքրականն է որ այս օրերուն յանկած Սէուտական Արաբիայէն Իսթանպուլ ժամանած է 15 հոգիներէ բաղկացած խումբ մը...: Այս առթիւ կ՚ըսուի նաեւ թէ անյայտացած լրագրողը՝ կծու յօդուած մը գրած է Սէուտական Արաբիոյ գահաժառանգ իշխան Մուհամմատ Պին Սալմանի դէմ:*

*Խաշողճին Իսթանպուլի սէուտական հիւպատոսարան, եկած էր, իր թուրք նշանածին հետ ամուսնութեան պաշտօնական ձեւակերպութիւնները լրացնելու: Իսկ իր դիակն իսկոյ հիւպատոսարանէն դուրս փոխադրուած է:*

*Իսթանպուլի հանրային դատախազութեան գրասենեակէն կը հաղորդուի թէ յատուկ քննչական հետազօտութիւն մը կը կատարուի այս կապակցութեամբ:*

# Սուրիա Կը Ստանայ S-300 Տիպի Նոր Հակա-Օդային Հրթիռներ

*Նախապէս կնքուած համաձայնագրի հիման վրայ վերջերս Սուրիոյ պաշտպանութեան նախարարութիւնն ստացած է S-300 տիպի 49 հակա-օդային նոր հրթիռներ: Ասոնց հետ միաժամանակ ստացուած են օդանաւներ, ռատարներ, հրթիռ արձակման հարթակներ, միջին տարողութեամբ պալիսթիք հրթիռներ, թաքթիքական յածանաւային հրթիռներ եւ այլ կազմածներ ու սարքեր:*

*Վերոյիշեալ աղբիւրներու համաձայն՝ իւրաքանչիւր զօրախումբի վաշտ ստացած է նաեւ ցամաքային 100 հրթիռներ:*

*Միւս կողմէ Սուրիոյ հանրապետութեան նախագահ Պաշար Ասատ հրապարակային յայտարարութիւն մը կատարեց ըսելով թէ մօտ է Իտլիպի վերջնական ազատագրման թուականը:*

# Քաթար Կը Մերժէ Իրանի Դէմ Օդային Երթեւեկութեան Պատժամիջոցը

*Ինչպէս ծանօթ է ԱՄՆ-ի իշխանութիւնները նոր սեղմումներ եւ պատժամիջոցներ սահմանած էին Իրանի Իսլամական Հանրապետութեան նկատմամբ: Այս առնչութեաբմ, Քաթարի մայրաքաղաք Տօհայի մէջ, տնտեսական բարձրամակարդակ համաժողովի մը ընթացքին, ելոյթ ունեցաւ Աքպար ԱԼ Պաքր: Ան ըսաւ թէ օդանաւային թռիչքները պիտի շարունակուին դէպի Իրան, չի նայած Ուաշինկթընի կողմէ Իրանի հանդէպ կիրարկուող քաղաքական եւ տնտեսական սեղմումներուն: Օդային երեթեւեկութեան արգիլումը երբեք չի կրնար ազդեցութիւնն ունենալ Քաթարի ճարտարարուեստին վրայ: Քաթարի օդանաւային ընկերութիւնը պիտի շարունակէ իր ուղեւորութիւնները, որոնք արդէն ընթացքի մէջ են, Իրանի քաղաքներուն հետ, մասնաւորաբար Հրանի, Մաշատի եւ Շիրազի հետ:*

# Նաթանիահու «Պատրաստուիլ Համասի Դէմ Պատերազմելու»

*Իսրայէլի վարչապետ Բենիամին Նաթանիահու բարձրաստիճան քաղաքագէտներու առջեւ ելոյթ ունենալով ըսաւ թէ կը պատրաստուինք հաւանական զինուորական պատերազմ մը սկսելու Համասի դէմ Կազայի մէջ: Նշենք նաեւ որ վերջերս Կազայի շրջանին մէջ հակա-իսրայէլեան նոր մագլցումներ եղած էին:*

---

# Ծառուկեան Դաշինքը եւ 16 Հանրապետականներ

Շարունակուած էջ 1-էն

*գահ Արմէն Սարգսեան հանդիպումներ ունեցած է վարչապետ Նիկոլ Փաշինեաի եւ Ազգային Ժողովի նախագահ Արա Բաբլոյեանի հետ:*

*Վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու բաժինէն փոխանցուած տեղեկութիւններով՝ հանդիպման ընթացքին քննարկուած են Հայաստանի ներքաղաքական իրավիճակին եւ զարգացումներուն, ներառեալ՝ խորհրդարանական արտահերթ ընտրութիւններու իրականացման առնչուող հարցեր:*

*«Համաձայնած էինք մեր հեռախօսազրոյցներու, նաեւ Փարիզի մէջ մեր հանդիպման ժամանակ, որ պէտք է հանդիպինք: Հանդիպած եմ արդէն նաեւ պարոն Բաբլոյեանի հետ եւ պիտի ուզէի քննարկել ներքաղաքական իրավիճակը»,- ըսած էր ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան:*

*«Իսկապէս շատ կարեւոր է, որ այս իրավիճակը քննարկենք նաեւ հանրապետութեան նախագահին հետ: Ըստ էութեան, հիմա կրնամ ըսել, որ վերջին օրերուն տեղի ունեցաւ քանի մը իրադարձութիւն, որոնք կարծես կը տանին դէպի հանգուցալուծում: Մասնաւորապէս, երէկ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեանի հետ յուշագիր ստորագրեցինք՝ Դեկտեմբերին խորհրդարանական արտահերթ ընտրութիւններ իրականացնելու վերաբերեալ, եւ եւս 16 պատգամաւոր գրաւոր յայտարարութեամբ պաշտպանած են այդ նախաձեռնութիւնը: Կը կարծեմ, որ, ըստ էութեան, կ՝ընթանանք լարուածութիւնը թօթափելու ճանապարհով, որ դրական է»,- ըսած է Նիկոլ Փաշինեան.*

*ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան նաեւ նշած է, «Ես նոյնպէս շատ ուրախ եմ, որ սկզբունքօրէն, ինչպէս նախապէս նշած էի, ընթացքը տեղի ունենայ երկխօսութեան եւ հանդուրժողականութեան մթնոլորտի մէջ: Ուրախ եմ լսելու, որ վերջին 1-2 օրուան ընթացքին բանակցութիւններու, երկխօսութեան ճանապարհով որոշ արդիւնք ձեռք բերուած է, եւ որ հաւանաբար հանգուցալուծումը հեռու չէ: Շատ կարեւոր է, որ այդ հանգուցալուծումը տեղի ունենայ»:*

# Արեւելք-Արեւմուտք Հիմնարկը Տարուայ Պետական Գործիչի Մրցանակը Շնորհած է ՀՀ Նախագահի Արմէն Սարգսեանին




Նիւ Եորքի մէջ՝ Արեւելք-Արեւմուտք հիմնարկի ամէնամեայ կալա մրցանակաբաշխութեան, հիմնարկի համահիմնադիր, ամերիկացի դիւանագէտ Ճոն Իտուին Մրոզի անունը կրող Համաշխարհային պետական գործիչի մրցանակը շնորհուած է Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանին:

Մրցանակը յանձնելու հանդիսաւոր արարողութեան ժամանակ Արեւելք-Արեւմուտք հիմնարկի տնօրէններու խորհուրդի նախագահ Ռոս Փերոթն իր ողջոյնի խօսքին մէջ մասնաւորապէս նշած է. - «Պատիւ ունինք Ճոն Իտուին Մրոզի անուան պետական գործիչի մրցանակը յանձնել Հայաստանը ներկայացնող Նորին Գերազանցութիւն Արմէն Սարգսեանին՝ որպէս պետական գործիչ անոր երկարամեայ գործունէութեան եւ արձանագրած նուաճումներու, ինչպէս նաեւ համաշխարհային զարգացման ուղղուած անոր նշանակալի ներդրումներուն համար: Հայաստանի Հանրապետութեան նախագահ ընտրուիլը եկաւ լրացնելու բնագիտութեան, մասնաւոր ոլորտի եւ պետական կառավարման ոլորտներու մէջ անոր ունեցած մեծ փորձառութիւնը: Այնպիսի ժամանակներու մէջ, երբ Հայաստանը կ'ապրի փոփոխութիւններու շրջան, Սարգսեանին վստահուեցաւ կայունութեան հաստատումն ու իր երկրի համար նոր տեսլականի առաջարկումը, որ վստահ ենք պիտի տանի դէպի աւելի ժողովրդավար ու բարգաւաճ ապագայ»:




Շնորհակալութիւն յայտնելով պատուաւոր մրցանակի համար՝ Արմէն Սարգսեանը, Հայաստանի նախագահի պաշտօնական կայքէջի փոխանցմամբ, իր ելոյթին մէջ մասնաւորապէս ըսած էր - «Ինձ համար մեծ պատիւ է այստեղ ներկայացնել իմ ժողովրդին ու պետութիւնը: Ես իսկապէս ունեմ ապագայի մասին երազանք կամ տեսլական, որը ներառում է նաեւ այն փաստը կամ իրողութիւնը, որին մենք առերեսուում ենք. այն է՝ ուր է շարժուում աշխարհը: Եթէ 20-րդ դարը բնական պաշարների եւ, դրանից ելնելով, քաղաքական ու այլ ուժերի դարն էր, ապա 21-րդ դարն ուրիշ է լինելու: 21-րդ դարը հետազօտութիւնների զարգացման, նոր թեխնոլոկիաների դար է: 21-րդ դարն այն ժամանակաշրջանն է, երբ ամէն բան արուելու է եւ ղեկավարուելու է նոր գաղափարների, նոր հետազօտութիւնների միջոցով, նրա՛նց կողմից, ովքեր արագ են, երիտասարդ՝ անկախ տարիքից, եռանդուն: Սա է լինելու 21-րդ դարը, քաղաքականութիւնն այլ կերպ է իրականացուելու»:

«Ես իսկապէս հաւատում եմ, որ 21-րդ դարը Հայաստանի դարն է, հետեւաբար, կարծում եմ, որ մենք յաղթանակած ենք լինելու: Ուրախ եմ հայ ազգի մասը լինել», - յայտարարած է Հայաստանի նախագահը՝ շարունակելով - «Մենք փոքր երկիր ենք, բայց համաշխարհային ազգ՝ 21-րդ դարի ազգ: Շատ չեն այսպիսի ազգերը, սակայն ես հաւատացած եմ, որ փոքր պետութիւն ունեցող, բայց համաշխարհային ազգերը, որոնք ունեն համաշխարհային փոխկապակցուածութիւն, կարող են համախմբուել ու կառուցել իրենց երկիրը: Հէնց դա է ապագան»:

«Ես պարտականութիւն ունեմ ծառայելու իմ ժողովրդին ու իմ երկրին՝ մի երկրի, որը 21-րդ դարում լինելու է աշխարհի առաջատարներից մէկը», - ըսած է Արմէն Սարգսեանը:

Ամէնամեայ այս մրցանակը տարբեր տարիներուն շնորհուած է այնպիսի անուանի գործիչներու, ինչպիսիք են ԱՄՆ 41-րդ նախագահ Ճորճ Պուշը, ԱՄՆ նախկին պետքարտուղար Հենրի Քիսինճըրը, Մեծն Բրիտանիոյ նախկին վարչապետ Թոնի Պլէրը, Գերմանիոյ նախկին կանցլեր Հելմուտ Քոլը, Չեխիոյ նախկին նախագահ Վացլաւ Հաւէլը եւ ուրիշներ:

# Ֆելիքս Ցոլակեան Պիտի Ստանձնէ ԱԻՆ Ղեկավարի Պաշտօնը



Ազգային ժողովի պատգամաւոր, Ազգային անվտանգութեան ծառայութեան տնօրէնի նախկին տեղակալ Ֆելիքս Ցոլակեանը պիտի ստանձնէ Արտակարգ իրավիճակներու նախարարի պաշտօնը: «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ Ցոլակեանը հաստատած է, որ վարչապետ Նիկոլ Փաշինեանն իրեն առաջարկած է ղեկավարել արտակարգ իրավիճակներու ոլորտը, ինչին համաձայնած է:

«Դեռ նշանակում չի եղել, ինձ հետ զրուցել են, առաջարկութիւն եղել է՝ ԱԻՆ-ի նախարարի պաշտօնը, ես համաձայնել եմ», - ըսած է Ֆելիքս Ցոլակեանը՝ աւելցնելով, որ համաձայնած է առաջարկին կառավարութեան աջակցելու նպատակով:

Արտակարգ իրավիճակներու նախարարի պաշտօնը կը զբաղեցնէր ԲՀԿ-ական Հրաչեայ Ռոստոմեանը: Ազգային ժողովի կանոնակարգ օրէնքին մէջ վիճայարոյց փոփոխութիւններու օրինագծին հանրապետականներու հետ նաեւ «Ծառուկեան» դաշինք եւ ՀՅ Դաշնակցութիւն խմբակցութիւններու պատգամաւորներու կողմ քուէարկելէն ետք վարչապետ Նիկոլ Փաշինեանը Բաղրամեան պողոտային վրայ հազարաւոր քաղաքացիներու ներկայութեամբ յայտարարած է ՀՅԴ-ի եւ ԲՀԿ-ի նախարարներն ու մարզպետները աշխատանքէն ազատելու մասին:



# Հայկազեան Հայագիտական Հանդէսի 38րդ Հատորին Շնորհանդէսը



ՀՈՒՐԻ ԱԹԹԱՐԵԱՆ

Աւելի քան քառորդ դարու ամէնամեայ աւանդութեան վերածուած, Հայկազեան Հայագիտական Հանդէսի անխափան լոյս ընծայումը աներկբայ վկայութիւնն է Հայկազեան Համալսարանի ունեցած դերին եւ յանձնառութեան՝ հայ դպրութեան սատարելու ընդհանուր ճիգերուն:

Հայկազեան Հայագիտական Հանդէսին 38րդ հատորին շնորհանդէսը տեղի ունեցաւ 3 Հոկտեմբեր 2018ի երեկոյեան ժամը 7:00ին, Հայկազեան Համալսարանի հանդիսասրահին մէջ: Ներկայ էին Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահ Վեր. Մկրտիչ Գարակէօզեան, Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեան, Լիբանանի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Պրն. Սամուէլ Մկրտչեան եւ համայնքի հետ կապերու կցորդ Դոկտ. Վլադիմիր Պօղոսեան, Լիբանանի հայոց առաջնորդ Նարեկ Արք. Ալեէմէզեանի ներկայացուցիչ Տէր Մկրտիչ քահանայ Քէշիշեան, Սուրիոյ Հայ Աւետարանական համայնաքպետ Վեր. Յ. Սելիմեան, Հեթում Վրդ. Տաղլեան, լիբանանահայ երեք օրաթերթերու եւ համացանցի լրատուական սպասարկութեան պատասխանատու խմբագիրներ, կրթական ու մամլոյ մշակներ եւ բարեկամներ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Հանդէսի խմբագիր, Հայ Աւետ. Գոլէճի տնօրէն Դոկտ. Արմէն Իւրնէշլեան: Բարիգալուստի խօսքերէն ետք, ան արժեւորեց երջանկայիշատակ Հայր Անդրանիկ ծայրագոյն վարդապետ Կռանեանի 27 տարիներու ծառայութիւնը Հանդէսին՝ իբրեւ խմբագրապետ: Իւրնէշլեան ընդգծեց, որ «Տարի մը անցաւ արդէն, եւ աշխատանքները չկաղացին, Հանդէսին որակը չտուժեց, կազմը համերաշխ գործեց: Կը նշանակէ, որ վարդապետը խսկապէ՛ս կրցած էր ոչ միայն գլխաւորել, այլեւ՝ ձեւաւորել աշխատանքային կազմ մը, որ առանց իրեն, բայց ի՛ր սկզբունքներով շարունակեց աշխատանքը. փաստը՝ այս հատորը»: Ապա ան ներկայացուց հատորին բովանդակութիւնը, նշելով որ ան կը բաղկանայ 40 յօդուածներէ, հրապարակումներէ, քննարկումներէ ու հաղորդումներէ, մանրամասնելով թէ քանի յօդուած կ՛անդրադառնար հայագիտութեան իւրաքանչիւր բնագաւառի: Անդրադառնալով հեղինակներուն, Դոկտ. Իւրնէշլեան մատնանշեց, որ ի հեճուկս հայագիտութեան հանդէպ առկայ պարտուողական կարծիքներու, Հանդէսին 38րդ այս հատորին մէջ 40էն նուազ տարիքի հեղինակներուն թիւը կը կազմէ 13: Հուսկ, ան եզրափակեց իր խօսքը հաւաստելով, թէ՝ «հակառակ մեզ շրջապատող զանազան ժխտական երեւոյթներու եւ յուսահատութեան մղող ազդակներու, Հանդէսը պիտի շարունակէ իր երթը նոյն յանձնառութեամբ, շնորհիւ համալսարանի ղեկավարութեան նեցուկին ու օժանդակութեան»:

Ապա ելոյթ ունեցաւ Հանդէսի պատասխանատու խմբագիր Դոկտ. Անդրանիկ Տագէսեան: Ան շեշտեց, թէ «հայ իրականութեան եռեւեփող առօրեային կշռութաւոր դարձած անկայունութեան մէջ», Հայկազեան Հայագիտական Հանդէսը, լիբանանահայ մամուլը, կիրակնօրեայ պատարագն ու պաշտամունքը եւ մեր դպրոցները ունին կշռութաւոր եւ կայուն ներկայութիւն: Ան նշելով, որ «համաշխարհայնացած մեծ պաստառին դիմաց, մեզմէ իւրաքանչիւրը իբրեւ անհատ, յաճախ ալ իբրեւ փոքրաթիւ ազգ՝ մենք զմեզ փոքրուկ կը զգանք», ընդգծեց, որ «չենք անդրադառնար, թէ մեզմէ դուրս գտնուող այդ մեծ ամբողջութիւնը կազմող համապատկերը ինքնին բաղկացած է փոքրամասնութիւններէ»:

Դոկտ. Տագէսեան շեշտեց, որ Հանդէսը պիտի շարունակէ քննականօրէն մօտենալ իր առաքելութեան, «արժեւորելով իր իւրաքանչիւր նորածինը, ձգտելով աւելի լաւին ու արդիւնաւէտին, գերազանցելով ինքզինք»:

Եզրափակելով իր խօսքը, Դոկտ. Տագէսեան յայտնեց, որ «այսօր շուրջ յիսնամեայ իր երթի հզօր տարիքին հասած Հանդէսը, կոփուած տասնամեակներու իր արդիւնքով, ջրդեղուած իւրայատուկ փորձառութեամբ, ներդաշնակուած իր երէց, միջին ու կրտսեր սերունդներու աշխատակիցներու հետազօտութիւններով, առաւել ամրացած իր նորամուտ խմբագիր Տիկ. Սիլվա Փափազեանով, թիկունքաւորուած Հանդէսի ձեռնարկներուն ներկայ գտնուող գիտակից բարեկամներով, ընդհանրապէս իր աշխատանոցին մէջ եւ շուրջ ծաւալած հաղորդականութեամբ, առողջ ժողովրդավարութեամբ ու համախոհական տրամադրութիւններով յառաջացուցած է համանուագ մը, որ իւրայատուկ կոհակներ կ՛արձակէ հայ միջավայրին: Հանդէսը դեռ երկար տարիներ պիտի շարունակէ

Շար.ը էջ 18

# Երիտթուրքերու Պատմութեան եւ Գաղափարախօսութեան Նուիրուած Միջազգային Գիտաժողով Ֆրեզնոյի Մէջ





«Իթիհատ եւ Թարաքի, հիմնադիրներ, գաղափարախօսութիւն եւ կառոյց» խորագրի տակ, Քալիֆորնիոյ Նահանգային համալսարանի (Ֆրեզնօ) Հայագիտական հիմնարկի նախաձեռնութեամբ տեղի պիտի ունենայ երկօրեայ միջազգային գիտաժողով Ուրբաթ, 12 Հոկտեմբեր եւ Շաբաթ, 13 Հոկտեմբեր 2018-ին, համալսարանի Business Center-ին մէջ (5245 N. Backer Ave., A. Peters Auditorium, Room 191, Fresno State campus):

Սոյն գիտաժողովը պիտի կեդրոնանայ Իթիհատ եւ Թարաքի (Երիտթուրքերու) կուսակցութեան գործունէութեան վրայ: Անոնք կը հանդիսանային Օսմանեան Թուրքիոյ քաղաքական առաջնորդները 1908-էն մինչեւ 1915 թուականը եւ անոնց որոշումներու եւ գաղափարախօսութեան խիստ հետեւանքները ներկայ էին հայոց Ցեղասպանութեան եւ համաշխարհային Ա. պատերազմի ընթացքին:

Գիտաժողովի մասնակիցները պիտի քննարկեն զանազան հարցեր՝ Իթիհատ եւ Թարաքի կոմիտէութեան եւ հայերու փոխյարաբերութեան մասին:

Գիտաժողովի հովանաւորներն են՝ Թոմաս Ա. Գուլումճեան Հիմնարկը, Լեւոն Ս. Փիթըրզ հիմնարկը եւ Մ. Վիքթորիա Գազան հայագիտական հիմնադրամը:

Հայագիտական ամպիոնի հիմնադիր՝ Փրոֆ. Պարլօ Տէր Մկրտիչեան պիտի կատարէ սոյն գիտաժողովի բացումը, Ուրբաթ առաւօտ ժամը 10:00-ին: Ապա, Ֆրանսայէն Տօքթ. Րէյմոնտ Գէորգեան պիտի խօսի, Երիտ. Թուրքերու իշխանութեան եւ գաղափարախօսութեան մասին:

Գիտաժողովի առաջին բաժինը ունի երկու դասախօսներ.- Hans-Lukas Kieser (University of Sydney, Australia) նիւթ՝ "Talaat Pasha and Ziya Gkalp" եւ Dugu Coskuntuna (Princeton University), նիւթ՝ Homeland and Nation Revisited:

Գիտաժողովը պիտի շարունակուի Շաբաթ օր, 13 Հոկտեմբեր առաւօտ. ժամը 10:00-ին:

Յաւելեալ տեղեկութեանց համար, դիմել (559) 278-2669 թիւին կամ այցելել www.fresnostate.edu/armenianstudies կայքէջը:

# Խաչատուրեան Դ. Դաս Երգչախումբի Հիմնադրութեան 40-րդ Տարեդարձը

Ուրբաթ, 9 Նոյեմբեր 2018 ժամը 8:00-ին, հանդիսապետութեամբ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ տեղի պիտի ունենայ Խաչատուրեան Դ. Դաս Երգչախումբի Հիմնադրութեան 40-րդ տարեդարձին նուիրուած բացառիկ համերգ: Համերգի ընթացքին պիտի հնչեն Մաժակ Թօշիկեանի ստեղծագործութիւնները, կատարողութեամբ՝ Խաչատուրեան Միացեալ Երկսեռ երգչախումբի եւ ղեկավարութեամբ՝ Բարշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի: Մուտքը ազատ է:

Իսկ Կիրակի, 18 Նոյեմբեր 2018 ժամը 10:30-ին, Թեմիս Առաջնորդին հովանաւորութեամբ, դարձեալ երգչախումբիս հիմնադրութեան 40-ամեակին առթիւ, Սուրբ եւ անմահ Պատարագ պիտի մատուցանէ Հայաստանի Գուգարաց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Չուլջյան, իսկ երգեցողութիւնը պիտի կատարէ Խաչատուրեան Դ. Դ. Երգչախումբը:

40 տարիներ առաջ Պոլիսէն Լոս Անճելըս հաստատուած հաւատացեալ եւ եկեղեցասէր խումբ մը նուիրեալ հայորդիներ՝ Հալիվուտի Առաջնորդարանի համեստ պայմաններու ներքեւ օրուան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանի բարձր հովանաւորութեամբ, օրհնութեամբ եւ քաջալերութեամբ հիմնեցին Խաչատուրեան Դպրաց-Դաս Երգչախումբը՝ ի յիշատակ Պոլսոյ Հայոց հանգուցեալ Պատրիարք՝ Երջանկայիշատակ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրեանի: Երգչախումբը սկսաւ իր շուրջը հաւաքել երգեցիկ երիտասարդներ եւ սկսաւ կատարել Սուրբ Պատարագի ներդաշնակ երգեցողութիւնը: Հիմնադիր անդամներէն գլխաւորն է Բրշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեան, որ ցայսօր կը կատարէ երգչախումբիս դպրապետութեան եւ խմբավարութեան պաշտօնները:

Մինչեւ օրս, երգչախումբը իր բոլորանուէր ծառայութիւնը կը բերէ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ՝ հանդիսաւոր օրերուն Սուրբ եւ անմահ Պատարագներու երգեցողութիւնը կատարելով եւ բազմաթիւ հայորդիներու հոգիները Հայ Եկեղեցւոյ շարականներով լիացնելով:

# Արմէն Արոյեան Ի Պատուի



Տ.Ա. ՎԱՆԱՏՈՒՐ

*Շաբաթ, 15 Սեպտեմբեր 2016ին Կիլիկիա Աւետարանական Հայ Եկեղեցին գնահատելի նախաձեռնութիւնը ունեցած էր պատշաճ ճաշկերոյթ-հանդիսութեամբ մը, ըստ արժանւոյն, պատուելու գաղութիս համանուն եկեղեցւոյ երգչախումբի վաստակաշատ խմբավար Արմէն Արոյեանը, որ իր անձնուէր խմբավարութեամբ եկեղեցւոյ երախտաշատ ծառայութեան մէջ կը գտնուէր 1971-էն ի վեր: Ձեռնարկը տեղի ունեցաւ եկեղեցւոյ Տէրեան հանդիսասրահին մէջ, ուր կը տիրէր տօնական մթնոլորտ մը այդ օր: Գործակից ընկերներու, բարեկամներու եւ տարիներ շարունակ իր առաջնորդութեամբ դէպի գրաւեալ պատմական Արեւմտեան Հայաստան այցելող հաւատաւոր ուխտագնացներու ստուար ներկայութիւն մը:*

*Հանդիսութիւնը սկսաւ Ամերիկայի եւ Հայաստանի ազգային քայլերգներով, Մարալ Բարսեղեանի կատարողութեամբ, որոնց յաջորդեց սեղաններու օրհնութիւնը վերապատուելի Սերոբ Մկրտիչեանի աղօթքով:*

*Հանդիսավարներ Տորիս եւ Արտա քոյրերը բովանդակալից, այլապէս, հաճելի ձեռնհասութեամբ գործադրութեան դրին բովանդակ ճաշկերոյթ-մեծարաքի հանդիսութեան խճողուած յայտագիրը, համալրիւ անդրադառնալով Արմէն Արոյեանի կենսագրական գիծերուն վրայ, որմէ ետք, Ռուբէն Պէրպէրեանի դասաւորումով ցուցադրուեցաւ մեծարեալի կեանքէն վերցուած լուսանկարներ սահիկներու վրայ արձանագրուած:*

*Մասնագիտութեամբ երկրաչափ, կոչումով երգ ու նուագի երգչախմբային վաստակաշատ, նուիրեալ խմբավար, եւ «Հայկական Ճարտարապետութիւնը Պատմական Հայաստանի մէջ», «Ուխտաւորի Ապրումներ» եւ «Իր Ծառայութեան Մէջ, Երգով եւ Նուագով» երեակ գիրքերու հեղինակ Արմէն Արոյեան ծնած է 1944-ին, Եգիպտոս: Ան, իր նախնական եւ երկրորդական, ապա երկու տարի երկրաչափական ուսում ստանալէ ետք գաղթած է Միացեալ Նահանգներ, 1962-ին, ուր շարունակելով իր համալսարանական ուսումը, տիրացած է Ելեքտրական Երկրաչափութեան բարձրագոյն վկայականին ու 24 տարի գործած է իբրեւ մասնագէտ, McDonald Douglas Aerospace Corp-ի մէջ, միշտ հաւատարիմ մնալով, նախակրթական վեցերորդ կարգին իր մէջ սկսած երաժշտութեան սիրոյն, որ զինք պիտի առաջնորդէր Փասատինայի Կիլիկեա Աւետարանական Եկեղեցւոյ Երգչախումբի, ինչպէս նաեւ, Փասատենայի Վարդանանց Ասպետներու արանց երգչախումբի խմբավարութիւններուն:*

*Ընթրիքի տեւողութեան ալընթեր, ելոյթներ ունեցան Մարալ Բարսեղեան, երգ, (Երբ Աստուծոյ հետ կը Քալես), դաշնակի ընկերակցութեամբ Եսթեր Ասիլեանի: Ալիս Թելեանի եւ Վարդան Բարսեղեանի պատրաստութեամբ, Արմէն Արոյեանի երգչախմբային խմբավարութենէն վերցուած կատարումներու շուրջ սահիկներու մասնակի ցուցադրութիւն եւ վերջապէս տեղի ունեցաւ Արոյեանի խմբավարութեամբ երգչախմբային ելոյթներ, դաշնակի ընկերակցութեամբ Եսթեր Ասիլեանի: Այդ ելոյթները իրենց գեղարուեստական գնահատելի որակով խանդավառութիւն ստեղծեցին հանդիսասրահէն ներս:*

*Այնուհետեւ, մեծարեալ Արմէն Արոյեանի ընկերային, ծառայասիրական, հայապահպանման պայքարի եւ ազգային ու մշակութային առաքելութեան նուիրեալ ոգիին մասին՝ սրտի խօսքերով եւ վկայութիւններով, հանդէս եկան իր սերտ գործակիցներէն՝ գրող Մայք Եուսուֆեան, Հրանդ Աղպապեան, վերապատուելիներ ՝ Ճօ Մաթոսեան եւ Գէորգ Թերեան, որոնք հարազատօրէն բնութագրեցին անոր օրինակելի՝ անհատական, հասարակական եւ գեղարուեստասիրական մարդկային նկարագիրը, որով ինք առաջնորդուած է մշտապէս:*

*Այշէնուր այդ ժամանակ ճամբորդելու ի վիճակի չէր: Արդէն ամիս մը վերջ ալ մահացաւ: Իմ կեանքի ամենածանր Դեկտեմբեր ամիսն էր, երբ զինք ներկայացնելու պաշտօնով ժամանեցի Վենետիկ: Վենետիկ արդէն միշտ թախիծով քաղաք մը եղած է:*

*Այդ տարի Այշէնուրի հետ միասին Մարաշախտ Թիթոյի զարմիկը՝ Սվեդլանա Պրոս եւս արժանացած էր այդ պուրակին մէջ յիշուելու:*

*Այդ պարտէզին մէջ աւելի ետք Հրանդ Տինք ալ ունեցաւ իր բաժինը: 2012-ին, երբ ազատ արձակուեցայ, ինծի համար մեծ ուրախութիւն եղած էր Փատովա*




*Արմին Ուեկների որդւոյն՝ Միշայի հետ հանդիպումը: Ես Ուեկները 1981 թուին մեր ընկերոջ Ուլիի՝ Գերմանիոյ մէջ համեստ հրատարակչատան մը համար պատրաստած հատընտիրի միջոցաւ ճանչցած եմ: Աւելի վերջ՝ 1994-ին, հրատարակեցի «Տարտանելի Կատուները» անուն գործը: 80-ական տարեթիւերուն Հայոց Ցեղասպանութիւնը Գերմանիոյ մէջ մոռցուած նիւթ մըն էր: 1977-ին Իվ Թերնոնի «Հայու Թապուն» գիրքը հրատարակուած էր, որուն յաջորդեց Լեփսիուսի Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան փաստաթուղթերէն հաւաքած նիւթերու հրատարակութիւնը: Էնկելսի ծննդավայր Ուափերթալ քաղաքին մէջ պիտի գտնէի Ուեկների արխիւը: Դժուար է պատերազմին սարսափը Տարտանելի կատուներուն ճակատագրին վրայ ունեցած ազդեցութիւնը նիւթ առնելով այսքան ցնցիչ կերպով պատմել: Ուեկներ պատերազմի կեդրոնին պատերազմի դէմ գործող զինուոր մըն է: Վիրաւորները ռազմաճակատէն հեռացնել է իր հիմնական պարտականութիւնը: Մէկ կողմէն կը կատարէ իրեն յանձնուած պաշտօնը, միւս կողմէ կ'օգնէ պատերազմէն տուժած խաղաղ բնակիչներուն: Անոր էջերը թղթատելով կ'ապրինք պատերազմի ամբողջ սարսափը: Ան միեւնոյն ժամանակ ցեղասպանութեան վաւերագրական լուսանկարիչ մըն է: 2015-ի Օգոստոսին Սթոքհոլմի Բանակի թանգարանին մէջ բացուեցաւ իր գործերու ցուցահանդէսը, «Արմին Թ. Ուեկներ, Հայոց Ցեղասպանութեան Ականատեսը» խորագիրով: Ցուցահանդէսին բացման ելոյթ ունեցաւ պատմաբան Վահագն Աւատեան, որ նաեւ հրատարակիչն էր Ուեկների «Հայ ժողովուրդի դէպի անապատ տարագրութիւնը» գիրքին:*

*Ուեկներ 1915-ին ԱՄՆ-ի նախագահ Ուիլսընին նամակ մը գրած էր հայոց ենթարկուած տանջանքներուն մասին: 1921-ին կը մասնակցի Թալեաթ փաշայի ոճիրի դատավարութեան: Աւելի ետք այդ դատավարութիւնը հրատարակուեցաւ, որուն թրքերէնի թարգմանութիւնը կատարեց Տողան Աքհանլը եւ մենք հրատարակեցինք 2003-ին: 1933-ին հրեաներու դէմ ատելութեան մեկնարկման օրերուն այս անգամ նամակ մը կը գրէ Հիթլերին, ըրածներուն դէմ զինք զգուշացնելու համար: Այդ նամակին հետեւանքը կ'ըլլայ ողջակիզ-*

Շար.ը էջ 19

# Համատեղելով Հաճելին եւ Օգտակարը, ԱՄՆ-ում Կայանալիք Ցուցահանդէսը Կարեւոր Նպատակ Ունի

*Գեղանկարիչ Գէորգ Ընծայ Բաբախանեանը պատրաստւում է իր հերթական ցուցահանդէսին, այս անգամ կրկին Ամերիկայի Միացեալ Նահանգներում:*

*Հոկտեմբերին և Նոյեմբերին նա ցուցահանդէսով կը ներկայանայ ԱՄՆ-ի չորս քաղաքներում՝ Գլենդէլ, Փասադենա, Լաս Վեգաս և Սքոթսդէլ:*

*Այս ցուցահանդէսը, սակայն, նկարիչի խօսքով, սովորական չէ, այն բարեգործական է լինելու:*



*Irakanum.am-ի հետ զրոյցում նկարիչը նշեց, որ նկարների վաճառքից ստացուած հասոյթի կէսը տրամադրուելու է Քարվաճառի մշակոյթի պալատի նորոգմանը:*

*«ԱՄՆ-ում այս ցուցահանդէսը կազմակերպւում է «Արարատ հիմնադրամը», համագործակցութեամբ ՀԲԸՄիութեան Փասադենա-Գլենդէլ մասնաճիւղի, Ռօզլին նկարչական սրահի, Ս. Կարապետ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Լաս Վեգաս, Ս. Աբգար Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Սքաթսդէյլ, Արիզօնա: Այսպիսով, նկարի գնումը խթանելու է նաեւ Արցախում մշակոյթի զարգացմանը», ասաց Գէորգ Ընծայ Բաբախանեանը:*

*Այս ցուցահանդէսին նկարիչն աւելի շատ աբստրակտ (վերացական) ոճի նկարներով է ներկայանալու, սակայն իր անցեալ շրջանի գործերից էլ կը ցուցադրուեն: 4 քաղաքներից իւրաքանչիւրում նկարիչը 30-ից 40 գործ կը ներկայացնի:*

*«Նկարչութիւնը իւրայատուկ բան է, մարդիկ կան, ովքեր հաւանում են իմ աբստրակտ (վերացական) գործերը, ոմանք էլ աւելի ֆիկուրատիւ (այլաբանական) գործերն են հաւանում: Սակայն ես մեծ տարբերութիւն չեմ դնում ոճերի մէջ, ինձ համար կարեւորը հոգին պահելն է: Եթէ դու նկարում հոգին պահում ես, կարեւոր չէ, թէ ինչ ժանրի (ոճի) մէջ ես աշխատում», ասում է նա:*

*Նկարիչը կոչով դիմում է ամերիկահայ հասարակութեանը, որպէսզի նրանք քաջալերեն իրենց այս ձեռնարկն, ու արդիւնքում Արցախում նախատեսուող ծրագիրն իրենք կարողանան իրականացնել:*

*«Ցուցահանդէսից զատ՝ ինձ համար կարեւոր է մեր ծրագրի իրականացումը, որովհետեւ շատ դժուար է այսօր մեծ ծրագիր իրականացնել: Խօսքը մօտ 100-150 հազար դոլարի մասին է, նման գումար հաւաքելն ի հարկէ մեծ խնդիր է, ու նման ցուցահանդէսներով, այլ միջոցառումներով պէտք է իրականացնենք ծրագիրը: Յոյս ունեմ, որ այս ցուցահանդէսը կը համատեղի հաճելին և օգտակարը, այսինքն՝ ձեռք բերելով նկար՝ նաեւ օգուտ էք տալիս Արցախի մշակոյթին: Դա է այս ցուցահանդէսի բուն նպատակը:*

*Կոչով դիմում եմ ամերիկահայերին, որպէսզի գան, մասնակցեն ցուցահանդէսին, համատեղեն հաճելին և օգտակարը՝ օգտակար լինեն արուեստին և մի արուեստի գործ տանեն իրենց տուն՝ այն հոգեւոր հարստացնելու համար», նշեց նա:*

*Խօսելով ժամանակակից գեղանկարչութեան հիմնախնդիրներից, Գէորգը նշեց, որ նկարիչն այսօր շատ լուրջ խնդրի առաջ է կանգնած:*

*«Ես երեք տեսակ նկարիչների եմ տարանջատում: Առաջին տեսակը նրանք են, ովքեր միլիոններով են վաճառում իրենց նկարները, դա արդէն բիզնես (գործի ոլորտ) է ու այստեղ մտնելը սովորական մահկանացուների համար չէ:*

*Հիմա էլ երրորդ կարգ է գոյացել՝ սկսնակ նկարիչներ, ովքեր, օրինակ, 50-60 տարեկանում նոր սկսում են նկարել, որովհետեւ այսօր նկարչութիւնը կանոններից դուրս է: Նրանք կարողանում են նոյնիսկ վաճառել իրենց գործերը ցածր գներով, նուիրել: Այսինքն, ստեղծել են պրոդուկտ (արտադրանք), որը շատ մասսաների (զանգուածների) բաւարարում է: Եւ կենտրոնում այն պրոֆեսիոնալ (արհեստավարժ) նկարիչներն են, ովքեր չեն կարող իջնել սովորական մակարդակի, ու ոչ էլ կարող են մտնել էդ բիզնես ասպարէզի մէջ, այդ պատճառով նրանց համար շատ բարդ է», ասաց նա՝ նշելով, որ բարդ է յատկապէս այսօր՝ տեխնոլոգիաների (արհեստագիտութիւնների) դարում, երբ շատերը չեն ցանկանում գումար ծախսել՝ արուեստի գործ գնելու համար:*

*«Բայց հասկացող մարդը, ով իսկապէս գնահատում է արուեստն ու ճիշդ նկարիչներին, հաստատ կը տայ այդ գումարը և ճիշդ կ'անի: Որովհետեւ կեանքը ապացուցում է, որ նաւթը կարող է էժանանալ, դոլարը կարող է արժեզրկուել, բայց արուեստի գործերը երբեք չեն արժեզրկւում», ասում է գեղանկարիչը:*

*Նշենք նաեւ, որ Գէորգ Ընծայ Բաբախանեանի՝ ԱՄՆ-ում կայանալիք ցուցահանդէսի բացումը տեղի կ'ունենայ Գլենդէլում՝ Հոկտեմբերի 25-31ը Roslin Art Gallery-ում, 415 E. Broadway, Suite 100:*

*Փասադենա քաղաքում կայանալիք ցուցահանդէսը տեղի կ'ունենայ Բարեգործականի Վաչէ և Թամար Մանուկեան կենտրոնի Բոյաջեան սրահում Նոյեմբեր 2-4 թուականին՝ 2495 E. Mountain St., Pasadena.*

*Լաս Վեգաս քաղաքում կայանալիք ցուցահանդէսը տեղի կ'ունենայ Ս. Կարապետ Հայց. Առաքելական եկեղեցւոյ Քուջաքեան սրահում՝ 2054 E. Desert Town Rd.*

*Սքաթսդէյլ-Արիզօնա քաղաքում կայանալիք ցուցահանդէսը տեղի կ'ունենայ Ս. Աբգար Հայց. Առաքելական եկեղեցւոյ մշակութային սրահի մէջ Նոյեմբերի 16-18, 8849 E. Cholla St.:*

*Ցուցահադէսների մուտքը ազատ է: Մանրամասնութեան համար հեռաձայնել (818) 303-5566 համարին:*





ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC
MEMBER
Garine Depoyan
626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

# Երբ Թիւերը կը Խօսին. . . Ի Պատիւ Հայ Թատրոնին
# ԹՄՄ-ի Մհեր Մկրտչեան Թատերախումբին Քսանամեակին Առթիւ






ԶԱՐՄԻՆԷ ՊՕՂՈՍԵԱՆ

Երկու տասնեակ տարիներ անցած են միմիայն, եւ այսօր թիւերը գումարելով կը չեփորեն Հայ թատրոնին յաղթանակը ամերիկահայ մեր կեանքէն ներս, ի պատիւ Հայ խօսքին, որ բեմերէն կը շարունակէ հնչեցնել ՄԵՍՐՈՊԵԱՆը:

8 բեմադրիչներ, 90 դերասաններ, 20-է աւելի քուլիսային թեքնիք աշխատակազմ, 22 թատերական գործ- հայ թէ օտար թատերագիրներու գործերէն- 62 ելոյթներ հրամցուած են Նիւ Եորք-Նիւ Ճըրզիէն, Լոս Անճելոս, Տիթրոյթ, Մոնթրէալէն մինչեւ հայրենի հանդիսատեսին՝ Գիւմրիէն Երեւան: Այս բոլորը շնորհիւ բեմի նուիրեալներու կամ՝ «սրբազան խենթերուն», Հայ խօսքը կրցած են հասցնել բազմահարիւր թատերասէրերու, անտեսելով արտասահմանեան առօրեային ամէնէն դժուարին պայմանները, ամէնօրեայ աշխատանքէն ետք գիշերները փորձերուն համնելու երկար ճամբորդութիւնն ու խճողումներու մղձաւանջը:

Միացեալ Նահանգներու Արեւելեան ափին միշտ ալ եղած են բեմադրութիւններ՝ երախտաշատ բեմադրիչներով, գովելի շնորհներով օժտուած դերասաններու կազմով, միշտ ալ հանդիսատեսին հրամցնելով մատչելի նիւթեր:

Ինչ որ գովելի է Նիւ Եորք-Նիւ Ճըրզիի ԹՄՄ-Մհեր Մկրտչեանի Անուան Թատերախումբին պարագային՝ հետեւողական եւ յամառ հետապնդումներու շնորհիւ է, որ անընդմէջ գործունէութիւն կ՛արձանագրէ: Քսան տարի յաջորդաբար հայերէնը հնչեցնել, լսելի դարձնել, սորվեցնել, նորելուկ երիտասարդներուն գրաւելով, քաջալերելով բեմ հանել, բոլորին ալ շրթներէն հայերէնը լսելի դարձնելով թատրոնի ծարաւ բազմահարիւր հանդիսատեսներուն հրամցնելու:

Այս բոլոր թուարկումներն ու գնահատանքի խօսքերը վերակենդանացան, Շաբաթ՝ Սեպտեմբեր 29, 2018-ի երեկոյեան, Նիւ Եորք քաղաքի գիշերային գգլխիչ տեսադաշտին հանդիպակաց՝ Հատսըն գետին Նիւ Ճըրզիի կողմը գտնուող Փալիսէտեում շքեղ սրահին մէջ կազմակերպուած պաշտօնական եւ հանդիսաւոր տօնակատարութեամբ:

Հետաքրքիր եւ նորարար եւ բարեփոխուած բառերով երգելով բարի գալուստ մաղթելու սկսան թատերախումբի անդամներէն Յարութ Պարսումեանն ու Դալար Զօքեանը: Խումբին մնացեալ անդամները հետզհետէ իրենց սեղաններէն ելլելով մէկ առ մէկ միացան, բոլորը միասին երգելով Լէպլէպիճի Հօրհօր աղայի նշանաւոր երգին եղանակով եւ ներկաներուն բուռն ծափահարութեան արժանանալով...

«Հայ թատրոնի զաւակներն ենք հարազատ,

Եկել ենք հոս նշելու մեր յաղթանակ,

Մենք սիրել ենք Հայ մշակոյթն ու լեզուն՝

Ինչ էլ որ լինի պիտ՛ տարածենք բեմերում»:

Հիացումի ու երախտիքի խօսքերով ծափահարուեցան վաստակաշատ բեմադրիչներ, իրենց գործնական եւ արհեստավարժ մասնագէտի ներդրումով փայլքը աւելցնելով թատերախումբի քսանամեայ ելոյթներուն:

Օրուան հանդիսավարն էր հայրենի եւ արտասահմանի բեմարուեստի հանդիսատեսներուն ծանօթ, շարժանկարներու եւ թատերախաղերու իր ելոյթներով բազմատաղանդ սիրուած դերասան, բեմադրիչ, թարգմանիչ, Ժիրայր Բաբազեան՝ Ֆրանսայէն:

Ժիրայր Բաբազեան իր իւրայատուկ հաղորդական ոճով ներկայացուց յայտագիրը: Յաջորդաբար, պատշաճ համեմունքով մէկ առ մէկ խօսեցաւ իւրաքանչիւր բեմադրիչին մասին, որոնք իրենց ներդրումը ունեցած էին անցնող քսան տարիներու ընթացքին: Մէկը միւսին գերազանցող, վաստակաւոր կամ երախտաշատ բեմադրիչներ բոլո՛րն ալ, որոնք անցնող քսան տարիներու ընթացքին, տարբեր հեղինակներու գործերով ներկայացած էին եւ իրենց իւրայատուկ հմտութեամբ, ոճով եւ համեմունքով բեմ հանած ԹՄՄ-Մհեր Մկրտչեան Թատերախումբի անդամները, մի՛շտ ալ հմայելով հանդիսատեսը, գեղարուեստական բարձր ճաշակով եւ կարելի բարձրագոյն որակով բեմադրութիւններ հրամցնելով թատերասէր հանդիսատեսին:

Այս թատերախումբը յաջորդաբար վայելած է - Հայրենի դերասանուհի, բեմադրիչ Թամար Յովհաննէսեանի, Վարդան Գաունիկի Յովհաննէսեանի (Նիւ Ճըրզի), Պերճ Ֆազլեանի (Պէյրութ), Յովհաննէս Պապախանեանի (Լոս Անճելոս), Գագիկ Կարապետեանի (Երեւան), Գրիգոր Սաթամեանի (Լոս Անհճելոս), Ժիրայր Բաբազեանի (Բարիզ) նման արհեստավարժ բեմադրիչներու բեմի հմտութիւնը:

Գնահատանքի արժանի է նաեւ- մասնաւորաբար տեղական ուժ, այս բոլոր վաստակաշատ բեմադրիչներուն հետ օրը-օրին գործնական թատրոնի դպրոցը յաճախող՝ եւ անոնց բացակայութեան գործը ճարտարօրէն վարող՝ Յարութ Զաթմաճեանը:

Սոյն երեկոյեան բոլոր բեմադրիչներն ալ ներկայ էին բացի անշուշտ բեմի անմոռանալի վարպետ՝ հանգուցեալ Պերճ Ֆազլեանէն եւ Հայրենի տաղանդաւոր դերասանուհի եւ բեմադրիչ՝ Թամար Յովհաննէսեանէն, որուն հայրենիքէն հասած սրտի խօսքը ընթերցեց՝ Գագիկ Կարապետեանը:

Ներկայ գտնուող բեմադրիչներէն իւրաքանչիւրը օրուան յայտագիրը համեմեց իւրօրինակ ու հետաքրքրական ելոյթներով:

Գագիկ Կարապետեան հայրենի ներկայ աւագանիին շնորհաւորագրերով բեռնաւորուած բեմ բարձրացաւ: Թատերախումբի բոլոր անդամներուն իր գնահատանքի խօսքէն ետք, մասնաւոր շնորհաւորական իր խօսքը ուղղեց թատերախումբի հիմնադիրին՝ Յակոբ Վարդիվառեանին եւ Թատրոնի Յանձնախումբի ատենապետ՝ Յարութ Զաթմաճեանին: Ան յաջորդաբար ներկայացուց Հայրենիքէն յղուած յատուկ շնորհաւորագրերը ՀՀ Մշակոյթի Նախարարուհի Լիլիթ Մակունցէն, Արտասահմանի Հայութեան հետ Մշակոյթի Կապի Կոմիտէի Նախարար՝ Մխիթար Հայրապետեանէն, ինչպէս նաեւ Թատերական Գործիչներու Միութեան Նախագահ՝ Հ. Ե. Ղազանչեանէն:

Գնահատանքի ու երախտագիտութեան խօսքերով բեմ հրաւիրուեցաւ թատերախումբի հիմնադիրն ու ողնասիւնը հանդիսացող Յակոբ Վարդիվառեանը, որ անցնող քսան տարիներու ընթացքին անկարելին կարելի դարձուցած էր բոլորանուէր եւ յամառ աշխատանքով բեմ հանելու, խումբը հիւրախաղերու տանելու եւ Մհեր Մկրտչեանի անունը կրող թատերախումբին անունը իր արժանավայել բարձունքին վրայ պահպանելու: Ան երախտիքի խօսքերով շնորհակալութիւն յայտնեց երեկոյեան իրենց օրհնաբեր ներկայութեամբ պատուող երկու հոգեւորականներու՝ Ս. Վարդան Մայր Տաճարէն Լուսարարպետ եւ Առաջնորդական փոխանորդ հայրերուն յանձինս՝ Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Պարսամեանին, եւ Հոգշ. Տ, Սիմէոն Աբղ. Օտապաշեանին: Շնորհակալութիւն յայտնեց նաեւ այն բոլոր ազգայիններուն եւ թատերասէրներուն, որոնք անցնող քսան տարիներու ընթացքին իրենց բարոյական եւ նիւթական աջակցութիւնը չէին գլացած:

Բեմ հրաւիրուեցաւ նաեւ Յարութ Զաթմաճեանը, որպէս հիմնադիր անդամ, բեմադրիչ եւ թատերախումբի յանձնախումբին ատենապետը, որ իր ամբողջական նուիրումով արհեստավարժ բեմադրիչներու բացակայութեան հմտօրէն կը շարունակէ ղեկավարել խումբը:

Յաջորդաբար գնահատանքի խօսքերով բեմ հրաւիրուեցան մաեւ քուլիսային աշխատանքէն շատ աւելին կամաւոր, անսակարկ աշխատանքով կատարող Տիկիններ՝ Մարի Զօքեանն ու Շնորհիկ Մինասեանը, իրենց վստահուած պարտականութիւնը պարտականութեան սահմանէն անդին ամբողջական նուիրումով կատարած ըլլալուն համար:

Երեկոն համեմող մասնագէտ բեմադրիչներ մէկ առ մէկ փայլեցան իրենց շնորհուած տաղանդով: Գր. Սաթամեանը իր զուարճախօսութեամբ ժպիտ եւ ծիծաղ բաժնելով տրամադրութիւն բարձրացուց, Յովհ. Պապախանեանը իր հմայիչ ձայնով դիւթեց ներկաները եւ իր աշխոյժ վարակիչ երգերով (Հայերէն, անգլերէն եւ իտալերէն) ներկաները ոտքի հանեց պարահարթակը պարողներով լեցնելու:

Թատերախումբի ադամներէն, բազմատաղանդ դերասան եւ երաժիշտ Յարութ Պարսումեանին ստեղծագործ մտայղացումով պատրաստուած կարճ, ամփոփ եւ խօսուն տեսաերիզը հանդիսատեսին ներկայացուց թատերախումբի անդամները իրենց հարազատ խօսքերով եւ մէջ-ընդ-մէջ զանոնք համեմելով զանազան թատերական ելոյթներէն նմոյշ-պատառիկներ ներառնելով: Արդարեւ շատ հետաքրքրականօրէն թատերախումբին պատմական մատուցուեցաւ ներկաներուն: Պարսումեանին գործն էր նաեւ քսանամեակի հանդիսութեան նուիրուած գրքոյկին աշխատանքը, գովելի ճաշակով եւ հմտութեամբ ի մի բերուած:

Եւ որպէս վերջաբան կ՛արժէ յիշել Յարութ Պարսումեանին նախաձեռնած խմբային երգին բառերը որ բեմահարթակէն դերասանները միաբերան երգեցին...

«Կը խոստանանք վառ պահել մեր այս Ջահը

Մհեր Մկրտչեանի անուան թատրոնը... Բազմացնենք մեր թատերասէր բանակը, Հարիւր յիսուն հոգիանոց Ջոկատը: Ուրեմն յառաջ զարկէ՛ք թմբուկ տօնական, Բարձր պահենք այս անունը պատուական, Պահպանելով Հայ թատրոնի պատմութիւն, Տարածելով սէր, ծիծաղ եւ խնդութիւն»:

Վարձքը կատար իւրաքանչիւր դերասանին, յանձնախումբի անդամներուն, քուլիսային աշխատանք կատարողներուն:

Կը մաղթենք եւ կը յուսանք, որ բոլոր կամաւորներն ու բարերարները յաջորդող տասնամեակներուն կը շարունակեն իրենց նուիրումը, նիւթական եւ բարոյական քաջալերանքը, կանգուն պահելու թատերախումբը, դարձեալ եւ միասնաբա՛ր տօնելու ոսկեայ ե՛ւ ադամանդեայ տարեդարձները ԹՄՄ-ի Մհեր Մկրտչեանի Անուան Նիւ Եորք-Նիւ Ճըրզիի այս թատերախումբին:

## Կեռասի Միջոցով Բուժուող Հիւանդութիւններ

Կեռասի եղանակը եկած է արդէն, որ կը նշանակէ, թէ ժամանակն է ո՛չ միայն կենսանիւթեր կուտակելու եւ վայելելու հրաշալի համը, այլեւ՝ կազդուրուելու:

- Աւելորդ կշիռ: Շնորհիւ B կենսանիւթին, որ բարենպաստ ազդեցութիւն ունի նիւթափոխանակութեան վրայ, կեռասը կ՚օգնէ պայքարելու աւելորդ կշիռի դէմ: Անիկա նաեւ կը կանոնաւորէ աղիքներուն աշխատանքը: Իսկ փաստը, որ կեռասը համեղ է եւ կ՚օգնէ անօթութիւն չզգալուն, պարզապէս նիհարնալու կատարեալ հնարաւորութիւն է:

- Անքնութիւն: Կեռասը մելաթոնինի բնական աղբիւր է, որմէ կախեալ է մեր խոր եւ լիարժէք քունը: Քնանալէն առաջ քանի մը բուռ կեռաս կերէք եւ պիտի մոռնաք առաստաղին նայելու եւ ոչխարները հաշուելու մասին:

- Շաքարախտ: Կեռասը ունի քիչ քանակով ածխաջուրեր: Անիկա նաեւ կը ներառէ հակաօքսիտանթներ, որոնք կը նուազեցնեն սրտի հիւանդութիւններու եւ չարորակ ուռուցքներու վտանգը: Կարեւոր է յիշել. շաքարախտով հիւանդներուն խորհուրդ կը տրուի օգտագործելու միայն թարմ կեռաս՝ ո՛չ հիւթ կամ անուշ:

- Արեան հիւանդութիւններ: Գուբամինները, քարօթինոիտները եւ փլաւոնոիտները, որոնք քաղցր կեռասին մէկ մասն են, կը կարգաւորեն արեան անբաւարարութիւնը, կը կանխեն խցանումներու ձեւաւորումը եւ կ՚ամրապնդեն արեան անօթներու պատերը, իսկ երկաթը կ՚օգնէ արիւնը յագեցնելու թթուածինով՝ կանխելով թուլութիւնն ու յոգնածութիւնը:

- Ջղային համակարգ: Ամիկտալինը, որ կը գտնուի կեռասի կոթին մէջ, կը հանգստացնէ ջղային համակարգը:

Հանգստութիւն ապահովելու համար՝ խորհուրդ կը տրուի խմել կեռասի կոթերէն պատրաստուած թէյ (օրը 2 գաւաթ):

## Փաստեր Կնոջ Մարմնի Մասին, Որոնք Երբեմն Չենք Գիտեր

Շատեր գիտեն կանացի մարմիններու անհաւանական դիմացկունութեան մասին ու լսած են տղամարդու եւ կնոջ կողմէ գոյներու ընկալման տարբերութիւններուն մասին: Գիտնականները կը ներկայացնեն կնոջ մարմնին առնչուող եօթը փաստ, որոնց մասին շատերս, հաւանաբար, երբեք չենք լսած:

1) Նկատա՞ծ էք, թէ ինչպէս կը շրջին կանայք եւ տղամարդիկ: Փորձեցէք գտնել տարբերութիւնը եւ պիտի տեսնէք, որ տղամարդը կը շրջէ իր ամբողջ մարմինը, իսկ կինը՝ միայն գլուխը: Պատճառը մկաններու կառուցուածքին մէջ է, որ աւելի ճկուն է կանանց պարագային:

2) Քունի ժամանակ կանայք աւելի զգայուն լսողութիւն ունին: Այս փաստը եղաշրջման գործընթացի հետեւանք է: Կանայք քնացած ժամանակ աւելի զգայուն են աղմուկի հանդէպ, որպէսզի անմիջապէս արթննան, երբ փոքրիկը կու լայ: Սակայն, լաւը այն է, որ այս օրէնքը կ՚աշխատի միայն բարձր ձայներու ժամանակ: Ցած հնչողութեամբ ձայները կնոջ չեն արթնցներ:

3) Կնոջ մէկ կուրծքը աւելի մեծ է միւսէն: Տարբերութիւնը կա՛մ կրնայ աննշան ըլլալ, կամ՝ բաւական նկատելի, սակայն երկու պարագաներուն ալ անհանգստանալու կարիք չկայ: Ոչ ոք բացարձակ հաւասար կուրծքեր ունի:

4) Կանայք աւելի բանական են քան տղամարդիկ: Հակառակ համատարած այն կարծիքին, որ կանայք աւելի զգացմունքային են, իսկ տղամարդիկ աւելի իրատես, իրականութիւնը բոլորովին այլ է: Ուղեղի հաստ կեղեւը կը կապուի շարք մը ճանաչողական եւ ընդհանուր հետախուզական փորձարկումներու բարձր գնահատականներուն հետ: Իսկ կանանց ուղեղի կեղեւը տղամարդոց ուղեղի կեղեւէն շատ աւելի հաստ է:

5) Ճարպային կուտակումը վատ չէ: Անիկա հասուն կնոջ գիրութեան նշան չէ: Վիճակագրութեան համաձայն, 40 կիներէն միայն մէկը չունի ճարպերու այդպիսի կուտակումկոնքա-հետոյքային հատուածին վրայ:

6) Կանայք աւելի արագ կը գինովնան քան տղամարդիկ: Կանանց հիւսուածքներուն մէջ աւելի քիչ ջուր կայ քան տղամարդոց: Կանայք աւելի արագ կը գինովնան քան տղամարդիկ, քանի որ անոնց մարմինը աւելի վատ յարմարուած է ալքոհոլը մարսելուն, մինչեւ անիկա հասնի արեան հոսքին:

7) Կանայք աւելի ամուր կը կապուին մարդոց: Պատճառը այն է, որ կանայք ունին օքսիտոցինի աւելի բարձր մակարդակ:

Օքսիտոցինը, այսպէս կոչուած, սիրոյ հորմոն է: Անիկա կը խթանէ կապուածութիւնը, կ՚ամրացնէ յարաբերութիւնները եւ կը մեղմացնէ ճնշուածութիւնը: Օքսիտոցինը նաեւ պատասխանատու է մօր եւ փոքրիկի միջեւ կապի ստեղծման եւ, նոյնիսկ, կուրծքով կերակրելու համար:

## Հինգ Կարծրատիպ՝ Միայնակ Կանանց Մասին

- Իրականութեան մէջ անոնք չեն ուզեր մինակ ըլլալ: Միայնակ կանանց շուրջ միշտ կը յայտնուին բազմաթիւ մարդիկ, որոնք կը փորձեն ամէն կերպ ճնշել անոնց, մէկը՝ հայրաբար, միւսը՝ մտերմաբար: Կ՚ըլլան ե՛ւ հակասական քննադատութիւններ, ե՛ւ լուրջ փաստարկներ, ե՛ւ խրատներ: Եթէ դուք ձեզ երջանիկ կը զգաք առանց տղամարդու, ուրեմն դիմադրեցէք այդ ճնշումներուն: Նոյնիսկ եթէ երջանիկ չէք, բնականաբար, ո՛չ ոք իրաւունք ունի քննադատելու ձեզ:

Բարձր ինքնագնահատականի պատճառով անոնք չափէն աւելի բծախնդիր են: Ոմանք ատիկա կ՚անուանեն բծախնդրութիւն, իսկ միւսները՝ բարձր պահանջներ: Բայց ասիկա նոյնպէս յարաբերական է: Ի՞նչ կարիք կայ հանդիպելու մէկուն հետ, որ ձեզի համար հաճելի չէ կամ ո՛չ մէկ հեռանկար ունի կամ այլ աշխարհայեացք ունի: Գիտցէ՛ք ձեր գինը ու գիջումներու մի՛ երթաք ուրիշներու

Շար.ը էջ 19

## Ի՞նչ Կը Պատահի, Եթէ Քնանաք Թաց Մազերով

Թաց մազերով քնանալը կրնայ յանգեցնել խումբ մը խնդիրներու, որոնցմէ են՝ գլխացաւը, մրսածութիւնը, մազերու որակի վատացումը, եւ այլն: Երեկոյեան լոգանք ընդունիլը կ՚օգնէ հանգստանալու, աւելի լաւ քնանալու, սակայն մազերը չչորցնելու պարագային կրնաք լուրջ խնդիրներու բախիլ:

- Գլխացաւ: Եթէ յաճախակի քնանաք առանց մազերը չորցնելու, կրնան պարբերական եւ ուժեղ գլխացաւեր յառաջանալ: Խնդիրը աւելի կը բարդանայ, եթէ գլուխը փաթթէք սրբիչով, որ կը պահէ խոնաւութիւնը: Այս իրավիճակը բացասաբար կ՚ազդէ արեան շրջանառութեան վրայ, կը մեծցնէ լարուածութիւնը, որուն իբրեւ արդիւնք ցաւ կ՚առաջանայ:

- Մազերու տկարութիւն: Եթէ կ՚ուզէք առողջ եւ ամուր մազեր ունենալ, դադրեցէք թաց մազերով քնանալէ: Թաց մազերը դիւրութեամբ կը վնասուին եւ կը տկարանան:

- Մաշկային վարակներ: Մազերը առանց չորցնելու քնանալը կը մեծցնէ մաշկի վարակներու հաւանականութիւնը. խոնաւ միջավայրը իտէալական է փոքր մարմիններու բազմացման համար: Սունկերու եւ վարակներու բազմացման իբրեւ արդիւնք՝ կրնան մաշկային հիւանդութիւններ յառաջանալ:

- Բորբոքում, քերուիլ: Խոնաւ միջավայրի մէջ բազմացող սունկերը կրնան քերուելու պատճառ դառնալ: Այս խնդիրները կրնան պարբերաբար յառաջանալ, եւ յաճախ քանի մը օր կը պահանջուի, մինչեւ անոնք անհետանան, յատկապէս եթէ խնդիրը պատշաճ չի լուծուիր:

- Գերզգայնութիւն եւ մրսածութիւն: Թաց մազերով քնանալու պարագային քունի ընթացքին մարմնի ջերմաստիճանը կը փոխուի, որ կրնայ տկարացնել դիմադրողական համակարգը եւ գերզգայնութեան ու մրսածութեան պատճառ դառնալ: Քանի որ խոնաւութիւնը քանի մը ժամ կը շարունակուի, մարմնի պաշտպանական կարողութիւնները կը տկարանան, որուն իբրեւ արդիւնք վարակները «կը գրոհեն» մարմինը:

- Ճարպոտ մազեր: Իբրեւ կանոն՝ ասիկա կը յանգեցնէ մազերու իւղոտելուն: Վերջինս կապուած է ճարպագեղձերու աշխատանքի խանգարման հետ, որ, իր հերթին, կը յանգեցնէ գլխամաշկի pH-ի հաւասարակշռութեան խախտման:

- Մկանային ցաւեր: Թէեւ մկանային ցաւերը կրնան կապուած ըլլալ խումբ մը գործօններով, բացառուած չէ նաեւ, որ անոր պատճառը կրնայ թաց գլուխով քնանալը ըլլալ: Բացի արեան շրջանառութեան վրայ բացասական ազդեցութենէն, ջերմաստիճանի փոփոխութիւնը նաեւ պատճառ կը դառնայ մկանային լարուածութեան:

- Թէփ: Թէփը կրնայ յառաջանալ սնկային վարակի հետեւանքով, որ կ՚առաջանայ նաեւ թաց մազերով քնանալու պարագային:

## Սխալներ, Որոնք Զոյգերը Կ՚ընեն Ամուսնութեան Առաջին Տարուան Ընթացքին

1) Չեն խօսիր դրամի մասին- Երբ կ՚օրինականացնէք յարաբերութիւնները, կը ստանձնէք որոշակի պարտականութիւններ, որոնք կրնան ազդել ձեր նիւթական կարողութիւններուն վրայ:

Ամուսնութեան առաւելութիւններէն մէկը նիւթական գործընկերութիւնն է. երկու եկամուտ եւ համատեղ ծախս: Բայց զոյգերը, որոնք նիւթականի մասին չեն խօսիր, առիթ կը ստեղծեն դժգոհութիւն եւ անվստահութիւն յառաջացնելու, որ կրնայ պատճառ դառնալ ամուսնութեան անյաջող աւարտին: Ժամանակ տրամադրեցէք ձեր համատեղ գումարներու վերլուծութեան, որպէսզի ձեր միջեւ փակ հարցեր չըլլան:

2) Կենցաղի մէջ հաւասար դերեր չեն ստանձներ- Առօրեայ հոգերը պէտք է կիսել երկուքի միջեւ: Օրինակ՝ ան կը թափէ աղբը, դուք կը լուաք ամանեղէնը: Ան կը գնէ մթերքը ձեր ցուցա կով, դուք կը պատրաստէք: Այդպէս ըրէք, քանի դեռ փոքրիկները չեն ծնած, քանի որ անկէ ետք իրավիճակը կրնայ աւելի բարդանալ: Եթէ դուք՝ համատեղ կեանքի սկիզբէն կենցաղի մէջ ձեր դերերը չբաշխէք, դժգոհութիւնը՝ որ դուք կ՚աշխատիք, իսկ միւսը հեռատեսիլ կը դիտէ, կրնայ ոչնչացնել ձեր ամուսնութիւնը:

3) Կը մոռնան ուշադրութեան փոքրիկ դրսեւորումները- Առանց առիթի ծաղիկները, անկողինի մէջ նախաճաշը եւ ուշադրութեան այլ նշանները պէտք չէ կորսուին ամուսնութենէն ետք:

Այդ պարզ, փոքրիկ ու յաճախ յիմար ժեսթերը ձեզ աւելի կը մտերմացնեն: Բոլոր ճնշումներու պարագային, որոնք կը յառաջանան փոխյարաբերութիւններու ժամանակ, կարեւոր է յիշեցնել իրարու, թէ ինչի համար ընտանիք ստեղծած էք:

4) Առանձին չեն ապրիր- Շատ կարեւոր է ունենալ սեփական տունը: Ամուսնութեան առաջին տարիներուն ծնողներու հետ ապրիլը կրնայ յանգեցնել ամուսնալուծութեան: Ամուսնութեան առաջին տարիները զոյգերու միմեանց հետ յարմարուելու տարիներն են: Զոյգերը կը սորվին միմեանց սովորութիւնները: Ուրիշներու ներկայութիւնը, յատկապէս ծնողներու, իբրեւ կանոն, կը յանգեցնէ յարաբերութիւններու անկման:

5) Չեն խօսիր մինչեւ ամուսնութիւն ունեցած պարտքին մասին- Որեւէ պարագայի ձեր կնոջ կամ ձեր ամուսինին պէտք է վստահիք ձեր պարտքերուն մասին գաղտնիքը: Քանի որ ամուսնութենէն ետք անիկա պիտի ըլլայ ձեր երկուքինը: Ձեր զոյգը իրաւունք ունի ատիկա գիտնալու: Սակայն, եթէ դուք կը թաքցնէք այդ տեղեկատուութիւնը, ձեր ընտրեալը, յետագային՝ գիտնալով այդ մասին, ինքզինք դաւաճանուած կրնայ զգալ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

www.massispost.com
Daily News Updates

## Յարութիւն Կարապետեանի Յիշատակին



Լոս Անճելոսի Այնթապցիների Մշակութային Միութիւնը Սեպտեմբերի 9ին Branview շքեղ սրահում կազմակերպել էր ճաշկերոյթ, նուիրուած Հ.Հ. Այնթապ գիւղում գտնուող Բիւզանդ եւ Մարի Մարգարեանների անուան միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքներին, ի յիշատակ Միութեան անմոռանալի անդամներից՝ Յարութիւն Կարապետեանի:

Արդէն բոլորիս հոգին բաժանումի կսկիծով է մորմոքուած: Եւ որքան էլ անդողդոջ շրթներով դժուար է կրկնել հրաժեշտի մասին, մենք կանգնած ենք ցաւալի եւ անհաւատալի իրողութեան առջեւ: Այլեւս մեր կողքին չէ ազգասէր, ջերմեռանդ հայրենասէր հպարտ այնթապցի, ժողովրդի սիրով խանդավառ մի ջերմ սիրտ, իր ողջ նկարագրով իսկական հայ, առաքինի անձնաւորութիւն՝ Յարութիւն Կարապետեանը, մարդ, որն իր կեանքը խունկի պէս վառեց մարդասիրութեան եւ բարեացակամութեան խորաններում, մարդ, որ մեծ էր, հոգով, գաղափարի անաղարտութեամբ, զգացմունքների ազնուութեամբ, մարդ, որ ունէր մեծ հոգի՝ մարդկանց սիրելու, նուիրուելու եւ ծառայելու:

Այո, հանգչեց իր շրջապատի հանդէպ սիրով եւ ջերմութեամբ խանդավառ մի ջերմ սիրտ, որ հրէ լիցք էր հաղորդում իր շրջապատին:

Դժուար էր լռեցնել նրա երակներում անվերջ մռնչացող արեան կանչը: Նա անվերջ մտածում էր, խորհում, պրպտում, պայքարում հայի բարօրութեան եւ լուսաւոր հայրենիքի համար:

Նա անվերջ իր շրջապատին վարակում էր խանդավառութեամբ եւ լուսաւոր զգացում ներով:

Այսպիսով, Յարութը իր ողջ կեանքում հոգու տաճարում կանգուն պահեց 3 խորան՝ նուիրուած բարուն, ճշմարիտին եւ գեղեցիկին: Դրանով եղաւ երջանիկ, երջանկացնելով իր շրջապատը:

Հայրը՝ ծորճ Կարապետեանն էր, մարդ որ իր կեանքի 55 տարիները անցկացրել էր հայրենանուէր ծառայութեան մէջ: Մասնակցել էր հերոսական ինքնապաշտպանութեան, այնուհետեւ չափել էր տարագրութեան մռայլ ճամբաները մինչեւ Սիրիա, Լիբանան, Պաղեստին, Եգիպտոս եւ ԱՄՆ: Նա հայրենաբնակ Այնթապցիների Միութեան ամենաեռանդուն անդամներից էր:

Հայրենասիրական նոյն ոգով էր օժտուած որդին՝ Յարութիւնը:

Սովորելով Երեւանի Կոմիտասի անուան Պետական կոնսերուատորիայում, այնուհետեւ Երեւանի գեղարուեստա-թատերական ինստիտուտում, երկա՜ր տարիներ Հայաստանի Պետական Ակադեմական երգչախմբի երգիչներից էր եւ համերգներով շրջագայել էր աշխարհի բազմաթիւ երկրներ:

Երկար տարիներ Այնթապցիների Մշակութային Միութեան նախագահն էր, կենարար կապը Հայաստանում ապրող այնթապցիների եւ աշխարհում ցրուած այնթապցիների միջեւ:

ԱՄՆ-ում եւս Այնթապցիների Մշակութային Միութեան ժրաջան անդամներից էր: Յարութը իր խորը ձայնով, հայրենասիրական երգերով միշտ զարդարում էր միութեան կազմակերպած միջոցառումները, իսկ հերոսամարտին նուիրուած երեկոները աւարտւում էին Այնթեպի հիմներգի անզուգական կատարումներով:

Յարութիւնը ամէն տեղ եւ իւրաքանչիւր հանգամանքի մէջ մնաց նուիրումի, հայրենասիրութեան եւ ընկերասիրութեան առաքեալը:

Աւա՜ղ, այսօր մեզ հետ չէ Յարութը... Թող Աստուած մխիթարութիւն շնորհիւ իր թանկագին ընտանիքին, կնոջը՝ սիրելի Սվետային, զաւակներին՝ Աստղիկին եւ Հայկին, որոնցով նա միշտ հպարտ էր, իր թոռներին, որոնց հետ կապւում էր շատ ու շատ երազանքներ, քրոջը՝ Լենային ու իր ընտանիքին, բարեկամներին, ընկերներին, մեր բոլորին:

Թող Աստծոյ լուսաւոր կանթեղը առյաւէտ բոցկլտի Յարութիւն Կարապետեանի շիրիմի վրայ եւ եղիցի լոյս իր գերեզմանին:

Անցեալ տարի, ամրանը ես Յարութիւնը եւ Փեռլա Քոթոյեանը գտնւում էինք հայրենիքում եւ միասին այցելեցինք «Բիւզանդ եւ մարի Մարգարեան» Այնթապի թիւ 2 միջնակարգ դպրոց եւ արժանացանք ջերմ ընդունելութեան դպրոցի տնօրէնուհի՝ Ալվարդ Սահակեանի եւ իր աշխատակիցների կողմից: Մենք ինչպէս իւրաքանչիւր անգամ, հիացանք կրթօճախով, որտեղ կրթւում է Զարենցի խօսքերով ասուած «Մեր լաւ գալիքի ոսկեհեր տղան, մեր լաւ գալիքի ոսկեհեր մանուկ» եւ հենց տեղում ծագեց դպրոցի վերանորոգման աշխատանքներին մեր Լոս Անճելոսի այնթապցիների մշակութային միութեան աջակցութիւնը բերելու գաղափարը, բայց ափսոս... Յարութը չտեսաւ այդ գաղափարի իրականացման աշխատանքները:

## Հայկազեան Հայագիտական Հանդէս

Շարունակուած էջ 7-էն

Հայր Կիւանեանին եւ այս խմբակին ու համալսարանի նախագահութեան կողմէ խմորուած ու մշակուած իւրօրինակ թարմ լաւաշ մատուցանել հայութեան եւ գիտութեան»:

Շնորհանդէսին իր սրտի խօսքը փոխանցեց դեսպան Պրն. Սամուէլ Մկրտչեան: Մեծարգոյ դեսպանը ողջունելով Հանդէսին հրատարակութիւնը, յայտնեց, թէ հատորը ծանրակշիռ է իր հարուստ բովանդակութեամբ, որով հնարաւորութիւն կը յառաջանայ ծանօթանալու հայ ժողովուրդի մշակութային, պատմական, գրական եւ ազգագրական երեսակներու: Ան յոյս յայտնեց, որ Սփիւռքի մէջ իր նմանը չունեցող Հայկազեան Հայագիտական Հանդէսը «մեզ պիտի ուրախացնէ, լուսաւորէ եւ մտորումներու առիթ հանդիսանայ դեռ երկար տարիներ», եւ մաղթեց որ Հանդէսը շարունակէ իր առաքելութիւնը նո՛յն ոգիով եւ նո՛յն նուիրումով:

Շնորհանդէսի եզրափակման իր խօսքը փոխանցեց վերապատուելի Հայտօսթեան, որ հանդիսութիւնը բնութագրեց հետեւեալ խօսքերով. «Այսպիսի հանդիսութեան մէջ դեր չունին հրավառութիւնն ու արտաքին պերճանքը, բազմութիւններն ու դահլիճներու փայլքը: Հուրի զօրութիւնը գրիչին մէջ է, պերճանքը՝ մտքի պայծառութեան, բազմութիւնը՝ նիւթերու խորքին զանազանութեան, իսկ փայլքը՝ հոգիի անկեղծութեան եւ անոր տարրական պարզութեան մէջ»:

Վեր. Հայտօսթեան բարձր գնահատելով հայագիտական բնագաւառին մէջ գործող մշակները, ըսաւ. ,Հայագիտութեան նուիրական աշխատանքի լծուած անձեր, նամանաւանդ Սփիւռքի մէջ, յաճախ կը զգան թէ արտադրողականութեան կողքին կայ թանկարժէք բան մը պահելու, պահպանելու եւ տակաւին տարածելու լուրջ առաքելութիւնը: Ընդհանրապէս նախանձելի չեն այն ասպարէզները ուր մշակը պէտք է գործէ վայրընթացի մթնոլորտի կամ վտանգուածի հոգեբանութեամբ, եւ փոխանակ մշակութիւն եւ յառաջընթաց կատարելու յամառօրէն խաղայ կղզիացած կալուածի տնտեսի դերը»: Վեր. Հայտօսթեան 1970էն իվեր Հայկազեան Համալսարանի Հանդէսին իւրայատկութեան ու դերին անդրադարձ կատարելէ ետք ապագայի ծրագրերու եւ յանձնառութեանց առումով մատնանշեց հետեւեալ շարք մը կէտերը.-

- Հայագիտութիւնը դիտել որպէս ապագայի գիտութիւն, զարգացող, ու այլ գիտութիւններու հետ քայլ պահող, եւ այդ բոլորը օգտագործել ամուր հիմքեր գտնելով:
- Ապահովել երիտասարդ սփիւռքահայ ուսումնասիրողներու ներդրումը:
- Պահպանել գիտական մակարդակը եւ շարունակաբար օգտագործել արդի մեթոտներ, լաւագոյնս օգտագործելով թուային աշխարհի հնարաւորութիւնները:
- Զարգացնել հայագիտական հանդէսներու եւ գիտաշխատողներու եւ հայագիտական կեդրոններու միջեւ գործակցութիւնը:
- Լեզուական թէ քերականական հմտութիւններու կորուստին զուգահեռ գծել սահմանները ընդունելիին ու անընդունելիին:
- Հայագիտութիւնը չվերածել գաղափարախօսութեան հարթակի:
- Զանազան լեզուներու օգտագործման իրականութեան մէջ չմոռնալ յատուկ կարեւորութիւնը արեւմտահայերէնին:

Եզրափակելով իր խօսքը, վերապատուելի Հայտօսթեան վերարժեւորեց տարի մը առաջ վախճանած երջանկայիշատակ հայր Անդրանիկ ծայրագոյն վարդապետ Կիւանեանը, եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ անոր շունչով բեղմնաւորուած խմբագրական կազմի պատասխանատու խմբագիր նշանակւած է Հանդէսի երկար տարիներու պատասխանատու քարտուղար՝ Դոկտ. Անդրանիկ Տագէսեանը:

Հուսկ, Վեր. Հայտօսթեան շնորհակալութեան խօսք ուղղեց ներկաներուն իրենց քաջալերական ներկայութեան համար:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ աւանդական կարկանդակի հատում եւ հիւրասիրութիւն:

---

Լոս Անճելոսի Այնթապցիների Մշակութային Միութեան որոշմամբ (ատենապետ՝ պատուարժան Աւետիս Դեմիրճեան) Հ.Հ- Արարատ Մարզի «Բիւզանդ եւ Մարի Մարգարեան» Այնթապի թիւ 2 միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքները աւարտելուց յետոյ պատին կը զետեղուի յուշատախտակ ի յիշատակ Յարութիւն Կարապետեանի:

Թանկագին Յարութ մենք քեզի յիշելու ենք այսօր, վաղը եւ ընդմիշտ: Քո անմոռանալի յիշատակը եւ թանկագին վաստակը անջնջելիօրէն կը մնայ բոլորիս հոգիներում որպէս առաջադէմ մտքերի, համամարդկային ապրումների փայլուն արտայայտութիւն ու մենք միշտ շշնջալու ենք «Մեր անգին, թանկագին ընկեր, ազնիւ հայ...»:

**ԹԱԳՈՒՀԻ ԱՐԶՈՒՄԵԱՆ**

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան կազմակերպութեամբ, ս. թ. Հոկտեմբերի 28-ին, Կիրակի, ժամը 5-ին, Գլենդէլի Ս. Աստուածածին եկեղեցու հարեւանութեամբ (211 W. Chestnut Str.) գործող Երիտասարդական Կենտրոնում տեղի կ 'ունենայ գրական-երաժշտական ճոխ երեկոյ՝ նուիրուած Երեւանի հիմնադրութեան 2800-ամեակին: Գրող-բանաստեղծների հետ միասին ելոյթներ կ'ունենան ճանաչուած երգիչ-երգչուհիներ Պապին Պօղոսեանը, Սուսաննա Մարտիրոսեանը, Հերմինէ Ամիրեանը, Մարիամ Աղաջանեանը եւ ուրիշներ: Երեկոյի ընթացքին կը ցուցադրուի տեսաժապաւէն Երեւանի մասին: Նշանաւոր դերասանուհի Թաքուհի Յակոբեանը առաջին անգամ հանդիսատեսի դատին կը յանձնի իր գեղանկարչական գործերից աւելի քան 20 կտաւներ:
Երեկոյի մուտքն ազատ է: Կը լինի հիւրասիրութիւն:

## Արեգակի Մեծութիւնը Մայրամուտին է Երեւում

Շարունակուած էջ 13-էն

օդանաւակայան՝ Ազնաւուրի թռիչքից մի քանի վայրկեան առաջ միայն:

- Բրաւօ՜ տղաս,- բոլորի համար լսելի ձայնով ասաց նա ու՝ աւելացրեց. Ցուսամ ամէն բան կարգին է:

- Այո՛, այո՛, կրնաք եղածին պէս յանձնել արտադրութեան,- հպարտութեամբ ասացի ես ու ձեռնուելով հանճարեղ երգչի հետ, յաղթականօրէն շարժուեցի դէպի օդանաւակայանից դուրս:

Յաջորդ օրուանից սկսեալ Հայաստանի ժողովուրդը օրուայ մէջ մի քանի անգամ ունկնդրում էր Շառլ Ազնաւուրի երգերը: Տարիների ընթացքում շատացան ֆրանսահայ մեծ Շանսոնյէի երգերը մեր Ռադիոյի ձայնադարանում:

Անցեալ դարի 70-ականներից սկսեալ Շառլ Ազնաւուրը գրաւեց աշխարհը իր պատմա-փիլիսոփայական երգերով: Նա չի երգում, նա պատմում է մարդու ցաւի, վշտի, երջանկութեան մասին եւ, իւրաքանչիւր պատմութեան հիմքում ընկած է սէրը, սէրը՝ մարդու, պետութեան, պատմութեան, բնութեան նկատմամբ:

- Պէտք է սիրել մարդուն, ինչ ազգի էլ նա պատկանելիս լինի,- սա՛ էր նրա ՀԱՒԱՏԱՄՔԸ՝ ԿՐԵԴՕ-ն: Նա տենչում էր լինել իր նախնիների ծննդավայրում, այնտեղ էր իր հայրենի տունը, սակայն՝

Ես չեմ կարող տունս մտնել
Քանզի այնտեղ անցեալն է իմ,
Որ կանգնում է աչքերիս դէմ՝
Եւ քայլ առ քայլ ինձ հետեւում...

Շառլ Ազնաւուրի հետ իմ երկրորդ առերես հանդիպումը կայացաւ մէկ տարի առաջ այստեղ՝ Լոս Անջելէսում, 2017 թ. Օգոստոսի 24-ին: Նա հրաւիրուած էր ներկայ լինելու իր պատուին Հոլիվուդի նշանաւոր աստղերի մայթին իր անունով սալիկի տեղադրման արարողութեանը: Այդ պատմական արարողութիւնից յետոյ, Տաղլեան չքեղ կենտրոնում տրուած փառահեղ ճաշկերոյթի ընթացքին հնարաւորութիւն եղաւ առանձինն զրուցել նրա հետ: Ես նրան յիշեցրի 1964 թուականի երեւանում կայացած համերգի մանրամասնութիւնները եւ Դիսկի պատմութիւնը:

- Այո՜, կարծեմ թէ ատանկ բան մը եղաւ, շատ ժամանակ անցած է, ամբողջ կեանք մը, մանրամասնութիւնները չեմ յիշեր,- ասաց նա:

- Այո, Պարոն Ազնաւուր, 53 տարի առաջ էր, դժուար է մտաբերել: Ռադիոյի այն օրուան երիտասարդը ես եմ: Ջեմ գիտեր, գիտէք թէ ոչ, պարզապէս յիշելու համար ըսեմ, որ 1990 թուականին ես էի, որ առաջին անգամ գրեթէ 40 տարուայ ՍԻՓԱՆ երգչախումբով Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբին հետ կատարեցի Ջեր՝ Հայաստանի երկրաշարժի զոհերուն նուիրուած «Քեզ, Հայաստան» երգը:

- Ի՞նչ կըսես, չէի գիտեր...

- Մեծն Պարոն Ազնաւուր, խնդրեմ թոյլ տաք իմ եւ տղայիս հետ պատկեր մը քաշուիլ Ջեզ հետ...

Լռութիւնը համաձայնութեան նշան էր: Այսպիսով, ես եւ Արամս նրա շուքի տակ մտանք մեր ընտանեկան ալպոմի մէջ:

Լաւ էլ գրել ես սիրելի Շառլ.
Տառապեցի, սակայն ի՜նչ փոյթ,
Երբ վշտերս մեռան ամէն,
Գիտեմ, ինձ քո դուռն է տանում
Ճանապարհը յաւերժութեան:

Դու՝ սիրելի Շառլ, նոր չէ, որ բռնել ես յաւերժութեան ուղին: Դու այդ ուղու վրայ ես եղել ի սկզբանէ, նոյնիսկ՝ տառապանքներիդ ոլորանում, որովհետեւ սիրել ես իմացել, սիրել ես մարդուն, սիրել ես կեանքը: Սիրոյ քաղցր երջանկութեամբ պարուր-ուած, ճաշակել ես նաեւ սիրոյ դառնութիւնը եւ՝

Պէտք էր, որ մի օր
Ցաւն ինձ այցելեր,
Ցաւն անակնկալ,
Որ կոչւում է ՍԷՐ:

## Մարդու Իրաւունքներու Անխոնջ Պաշտպան

Շարունակուած էջ 14-էն

ման ճամբարներու մէջ հիւրընկալումը: Իր կինը՝ Մոլա Լանտաու, ամուսինը փրկելու համար կ'ամուսնալուծուի ու կ'երթայ Պաղեստին: 1998-ին Երեւանի Արդարներու պատին վրայ կը տեսնեմ Ուեկների անունը: Վերջ ի վերջոյ ան տեղ գտաւ նաեւ Վարշաւայի Արդարներու այգիին մէջ, Լեմքինի հարեւանութեամբ: Ո՞վ գիտէ, թերեւս օր մըն ալ իր անունին կը հանդիպիմ Թուրքիոյ քաղաքներէն մէկուն մէջ բացուած Արդարներու այգիին մէջ:

«ԱԿՕՍ»

### ԾԱԽՈՒ Է

Ծախու է Լիբանանահայ մտաւորական «Նայիրի» ամսագրի ականաւոր խմբագիր՝ Անդրանիկ Ծառուկեանի «Նայիրի» ամսաթերթերու 1958-1975 տարիներու լաթակազմ հաւաքածոները:
Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել՝
Վաhէ Աջապաhեանին՝ (626) 354-5924:

### AMAA Centennial Banquet

Los Angeles – October 20, 6 pm , AMAA Centennial Banquet at Biltmore Hotel will honor Benefactors Stephen Philibosian and Conte Foundations, Sheen Family Trust, Gerald and Patricia Turpanjian, TF Educational Foundation. Kenneth Khachigian, Master of Ceremonies . For more information call Levon Filian 626.487.5878 or the AMAA Office 201.265.2607 or e-mail mpoulos@amaa.org

## Սփիւռքի Նախարար Մխիթար Հայրապետեան

Շարունակուած էջ 14-էն

քում տարբեր երկրներում բազմիցս կազմակերպուել են հայ համայնքների մեծարման միջոցառումներ, օրինակ՝ Ռդ-ում 2017թ. աշնանը ՌԴ եւ ՀՀ մշակոյթի նախարարութիւնների կողմից իրականացուել է «Հայաստանի մշակոյթի օրեր», 2018թ. Փարիզի քաղաքապետարանի կողմից Տլիմսեն ու Սպինոզա փողոցների հատման կէտում գտնուող ճեմուղին վերանուանուել է հայազգի կին գրող, թարգմանիչ, հրապարակագիր Զապէլ Եսայեանի անունով եւ այլն:

Անցած տարի Լեհաստանի Սեյմը, նշելով Լեհաստանում հայ համայնքի 650-ամյակը, իր երախտիքը յայտնեց հայ համայնքին եւ ընդունեց յատուկ բանաձեւ՝ այդպիսով մէկ անգամ եւս գնահատելով հայերի՝ Լեհաստանի պատմութեան մէջ ունեցած մեծ դերակատարութիւնը: Նման միջոցառումների ցանկը կարելի է երկար շարունակել: Սա նաեւ պայմանաւորուած է նրանով, որ հայերը, որ երկրում էլ բնակութիւն են հաստատել, փորձել են իրենց ներդրումն ունենալ տուեալ երկրի զարգացման գործում:

- Ինչպէս է իրականացվում Հայաստանի կառավարության եւ սփյուռքահայերի/արտագաղթածների համագործակցությունը՞:

- Սփիւռքի հայ համայնքների եւ ՀՀ կառավարութեան միջեւ մշտական կապը եւ գործակցութիւնը իրականացւում է ՀՀ սփիւռքի նախարարութեան հետ անմիջական կապի, ինչպէս նաեւ տուեալ երկրներում ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւնների եւ հիւպատոսական հիմնարկութիւնների միջոցով: Թաւշեայ յեղափոխութեան արդիւնքում ձեւաւորուած կառավարութիւնը Հայաստան-սփիւռք յարաբերութիւնների նոր տրամաբանութիւն ու օրակարգ է առաջ բերել: Այս տարի արդէն նախարարութիւնը նոր ծրագրեր է մեկնարկել՝ յատկապէս շեշտադրելով սփիւռքահայ երիտասարդների հետ տարուող աշխատանքները:

## Հինգ Կարծրատիպ՝ Միայնակ Կանանց Մասին

Շարունակուած էջ 17-էն

ճնշումներուն ներքոյ:

- Անոնք չեն գիտեր, թէ ինչ կ'ուզեն: Առաջին հերթին պէտք է ուսումնասիրէք դուք ձեզ, իսկ յետոյ ձեզ՝ յարաբերութիւններու մէջ: Եթէ դուք չէք անցած առաջին փուլը՝ երկրորդին անցնիլը անիմաստ է: Շրջապատին կը թուի, թէ դուք ծայրայեղութենէ ծայրայեղութիւն կ'անցնիք, բայց եթէ այդ հարցին այլ դիտանկիւնէ նայինք՝ դուք պարզապէս կ'ուզէք դուք ձեզ հասկնալ, ու տղամարդը այդ հարցով ձեզի միայն պիտի խանգարէ:

- Անոնք սխալ առաջնահերթութիւններ ունին: Զ'արժեր ուշադրութիւն դարձնել ամենագէտ ընկերուհիներուն, որոնք կը վստահեցնեն, որ առանց տղամարդու կեանքը կեանք չէ: Ու ինչո՞ւ պէտք է յարաբերութիւնները համարուին առաջնահերթութիւն: Եթէ դուք մինակ էք՝ չի նշանակեր, որ դուք ձեր տարիները կը վատնէք հաւաքոյթներու եւ աշխատանքի վրայ: Հնարաւոր է, որ ձեր գլխաւոր առաջնահերթութիւնը ինքնազարգացումն է, այլ ոչ թէ սպիտակ նժոյգով արքայազնը որոնելը: Այնպէս որ դեռ հարց է, թէ որո՞ւն առաջնահերթութիւնները սխալ են:

- Անոնք դժբախտ են: Երջանկութիւնը հոգեվիճակ է, որ կախեալ է բազմաթիւ գործօններէ, որոնք, ի դէպ, կրնան եւ չներառել տղամարդը: Մեր հասարակութիւնը ինքնաբերաբար ձեր վրայ կը դնէ »խոտան« պիտակը, եթէ դուք ամուսնացած չէք:

Ջեր կեանքը դատարկ է, դուք խեղճ էք, ապագայ չունիք: Եթէ ձեր սիրած երգերը լսելով կը ժպտիք, կը վայելէք արեւու շողերը կամ բաւականութիւն կը ստանաք ցուրտ եղանակին վազելէն, ուրեմն դուք ամենեւին ալ դժբախտ չէք:

## Արմէն Արոյեան Ի Պատուի

Շարունակուած էջ 8-էն

նեց իր գնահատութեան վկայագիրը , հայ մշակոյթին ու Կիլիկիա Աւետարանական Հայ Եկեղեցւոյ բերած գնահատելի ներդրումին համար, որուն յաջորդեց անոր շնորհակալական խօսքը, ուղղուած պատկան մարմիններուն, որոնք կազմակերպած էին սոյն մեծարանքի շքեղ հանդիսութիւնը, աջալրջօրէն պատրաստուած յայտագրին մաս կազմող բոլոր արուեստագէտներուն, ինչպէս նաեւ, սրտի ջերմ խօսքերով ելոյթ ունեցողներ՝ Մայք Եուսուֆեանին-, Հրանդ Աղպապեանին, վերապատուելիներ ՝ Ճօ Մաթոսեանին, Գէորգ Թերեանին եւ Պերճ Ճամպազեանին:

Վերապատուելի Պերճ Ճամպազեան, Արմէն Արոյեանին ուղղուած իր եզրափակիչ բարձր գնահատական ելոյթէն ետք, հանդիսութիւնը յանգեցաւ իր աւարտին, առիթ հանդիսանալով ներկաներուն, որ իրենց կարգին շնորհաւորեն զինք, մաղթելով քաջառողջ, արեւշատ եւ արդիւնաւոր երկար տարիներ:

Մասիս Շաբաթաթերթի խմբագրութիւնը, իր հերթին, ջերմօրէն կը շնորհաւորէ Արմէն Արոյեանը, բարձրօրէն գնահատելով իր ազգային եւ հայրենասիրական ծառայութիւնները, կը մաղթէ քաջառողջութիւն եւ արդիւնաշատ երկար քեանք:

Վարձքդ կատար Արմէն Ջան:

## «Հայաստան Պողոտայ»

Շարունակուած էջ 8-էն

խորհուրդին եւ Ցեղասպանութեան 100-Ամեակի մարմնին կողմէ, առաջնորդութեամբ Հայր Մալխասեանի, Տօքթ. Լին Ջէթինի, Կարօ Սէքտորեանի եւ գաղութի այլ անհատներու նեցուկով:

Այս արարողութեան ներկայ էին նաեւ Հրեայ Ռապպայ Մոնաշ Պովիթ եւ ծխական խորհուրդի ատենապետ՝ Արամ Ջամիջեան:

Մօտ 15,000 Հայեր կ'ապրին Քուինզ, Նիւ Եորք:

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Արմէն Գիւլբուդաղեանցը՝ Հայաստանի Ազգային Հաւաքականի Գլխաւոր Մարզիչ



*Հոկտեմբերի 13-ին եւ 16-ին Հայաստանի ազգային հաւաքականը կ՚անցկացնի ՈՒԵՖԱ-ի Ազգերի լիգայի մրցաշարի հերթական տուրերի հանդիպումները՝ Երեւանում մրցելով համապատասխանաբար Ջիբրալթարի եւ Մակեդոնիայի հավաքականների հետ: Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի գործադիր կոմիտէն հաստատել է Արմէն Գիւլբուդաղեանցին Հայաստանի ազգային հաւաքականի գլխաւոր մարզչի պաշտօնում: Մարզչական շտաբում ընդգրկվել են Սուրէն Չախալեանը, Աշոտ Ավետիսեանը, Ռոման Բերեզովսկին (դարպասապահների մարզիչ):*

*ՀՖՖ առաջին փոխնախագահ, Գլխաւոր քարտուղարի պաշտօնակատար Արմէն Մելիքբեկեանի յայտնել է որ, Արմէն Գիւլբուդաղեանցն առաջին իսկ օրուանից եղել է թեկնածուների շարքում: Արմէն Գիւլբուդաղեանցը լաւագոյնս տիրապետում է իրավիճակին, գիտի ֆուտպոլիստների կարողութիւնները եւ ունակ է լաւագոյնս աշխատել ազգային հաւաքականի հետ:*

## Եուրա Մովսիսեանը Վերադառնում է Ֆուտպոլի Հայաստանի Հաւաքական



*Հոկտեմբերի 13-ին եւ 16-ին Հայաստանի հաւաքականը կ՚անցկացնի Ազգերի Լիգայի մրցաշարի հերթական հանդիպումները՝ հանդիպելով համապատասխանաբար Ջիբրալթարի եւ ՆՀՀ Մակեդոնիայի հաւաքականների հետ:*

*Հոկտեմբերի 9-ին՝ ՀՖՖ տեխնիկական կեդրոնում՝ ֆուտպոլի ակադեմիայում, սկսուելու է նախապատրաստական հաւաքը, որին մասնակցելու համար Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Արմէն Գիւլբուդաղեանցը հրաւիրել է 25 ֆուտպոլիստներին.*

## Հայաստանի Հաւաքականները Մեդալ Չնուաճեցին Շախմատի Օլիմպիադայում

*Հայաստանի շախմատի հաւաքականները չկարողացան մրցանակային տեղ զբաղեցնել Բաթումում աւարտուած շախմատի համաշխարհային օլիմպիադայում:*

*Մեր տղամարդկանց ընտրանին վերջին՝ 11-րդ տուրում ոչ-ոքի՝ 2:2 խաղաց Գերմանիայի թիմի հետ: Հայաստանի հաւաքականը վաստակած 16 միավորով բաժանեց 6-14-րդ տեղերը:*

*Հայաստանի կանանց ընտրանին, որը վերջին տուրում յաղթելու դէպքում միանշանակ մրցանակային տեղ կը զբաղեցնէր, վճռորոշ խաղում 1:3 հաշուով պարտուեց Վրաստանի 1-ին թիմին: Արդիւնքում, մեր հաւաքականը 16 միաւորով կիսեց 4-12-րդ տեղերը:*

## Նուրմագոմեդովին Սպառնում է Հեռացում UFC-ից




*Խառը մենամարտերի թեթեւ քաշային կարգում UFC ախոյեանի տիտղոսը պաշտպանած Խաբիբ Նուրմագոմեդովին սպառնում է հեռացում UFC-ից: Այդ մասին յայտնել է ԱՄՆ-ի Նեւադա նահանգի Աթլետիկական յանձնաժողովի նախագահ Բոբ Բենեթը:*

*Տիտղոսային մենամարտում խեղդող հնարքով Քոնոր Մաքգրեգորին յաղթած Նուրմագոմեդովը մենամարտից յետոյ դուրս էր եկել ութանկիւնից եւ յարձակուել Մաքգրեգորի թիմի ներկայացուցիչների վրայ: Յանձնաժողովը նաեւ կը սառեցնի հոնորարի վճարումը Նուրմագոմեդովին մինչեւ միջադէպի հետաքննութեան աւարտը: Նուրմագոմեդովը պէտք է ստանայ 2 միլիոն տոլար:*

*Նուրմագոմեդովը մենամարտից յետոյ տեղի ունեցած ասուլիսում ներողութիւն է խնդրել կազմակերպիչներից եւ Նեւադայի Աթլետիկական յանձնաժողովից՝ իր վարքը պայմանաւորելով Մաքգրեգորի եւ նրա թիմակիցների կողմից հնչած վիրաւորանքներով:*

## «Արսենալը» Յաղթել է Ատրպէյճանը Ներկայացնող «Ղարաբաղին»

*Եւրոպա լիգայի խաղարկութեան խմբային փուլի երկրորդ տուրում Լոնտոնի «Արսենալն» արտագնայ խաղում 3:0 հաշուով յաղթել է Ատրպէյճանը ներկայացնող «Ղարաբաղին»:*

*Կոլերի հեղինակներն են՝ Սոկրատիս Պապաստատոպուլոսը, Էմիլ Սմիթ-Ռոուն, Մաթէօ Գենդուզին:*

*Հայաստանի ֆուտպոլի ազգային հաւաքականի եւ «Արսենալի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը չէր մեկնել Պաքու:*

*ESPN-ի թղթակից Մաթիաս Կարենը Թուիթերում աւելի վաղ գրել էր. «Ասել են, որ Մխիթարեանը չի մեկնի Ատրպէյճան մասնակցելու Եւրոպայի լիգայի խմբային փուլի «Ղարաբաղ»-ի դէմ խաղին: Հայ-ատրպէյճանական հակամարտութիւնը հաշուի առնելով՝ Մխիթարեանն անձամբ է ընդունել նման որոշում՝ սեփական անվտանգութեան համար»:*

## «Արսենալը» Խոշոր Հաշուով Յաղթեց «Ֆուլհեմին», Հենրիխ Մխիթարեանը Մասնակցեց Ամբողջ Խաղին




*Անգլիայի Պրեմիեր լիգայի 8-րդ տուրում «Արսենալն» արտագնա հանդիպում անցկացրեց «Ֆուլհեմի» հետ եւ 5:1 հաշուով վստահ յաղթանակ տօնեց:*

*«Զինագործների» կազմում դուբլեր ձեւակերպեցին Ալեքսանդր Լակազետը եւ Պյեր-Էմերիկ Օբամեեանգը, մէկ կոլով էլ աչքի ընկաւ Արոն Ռեմսին: Դաշտի տերերի կազմում միակ գոլը հեղինակեց Անդրէ Շյուրլեն:*

*Հայաստանի ազգային հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն «Արսենալի» մեկնարկային կազմում էր եւ առանց փոխարինման մասնակցեց ամբողջ խաղին:*

*Անգլիայի Պրեմիեր լիգայում 6-րդ անընդմէջ յաղթանակը տօնելուց յետոյ Ունայի Էմերիի թիմն ունի 18 միաւոր եւ այժմ զբաղեցնում է մրցաշարային աղիւսակի 3-րդ հորիզոնականը, իսկ «Ֆուլհեմը» 5 միաւորով 17-րդ տեղում է:*

## Մեսսին Կրկին ՉԼ-ի Շաբաթուայ Լաւագոյն Ֆուտբոլիստ է Ճանաչվել

*Ախոյեանների լիգայի խմբային փուլի երկրորդ տուրում «Բարսելոնայի» արժենթինացի յարձակուող Լիոնել Մեսսին ճանաչուել է շաբաթուայ լաւագոյն ֆուտպոլիստ:*

*«Բարսելոնան» այս շաբաթ յաղթել է Լոնտոնի «Տոտենհեմին» (4:2), իսկ Մեսսին երկու գոլի հեղինակ է դարձել:*

*Պարգեւին են հաւակնել նաեւ Պաուլօ Դիբալան՝ «Յուվենտուսից», Նեյմարը՝ ՊՍԺ-ից եւ Էդին Ջեկոն՝ «Ռոմայից»:*

*Նշենք, որ Ախոյեանների լիգայի խմբային փուլի առաջին տուրում եւս ՈՒԵՖԱ-ն լաւագոյն ֆուտպոլիստ էր ճանաչուել Լիոնել Մեսսիին:*

## Ռոնալդուին հեռացրել են Պորտուգալիայի Հաւաքականից

*Ֆուտպոլիստ Քրիշտիանու Ռոնալդուին արգելել են մասնակցել Պորտուգալիայի հաւաքականի խաղերին: Որոշումն ընդունուել է ֆուտպոլիստին բռնաբարութեան մէջ մեղադրելու հիման վրայ:*

*Ռոնալդուն չի կարող մասնակցել հաւաքականի՝ Լեհաստանի եւ Շոտլանդիայի հետ հանդիպումներին:*

*Ֆուտպոլիստը մեղադրւում է ամերիկացի Քեթրին Մայորգային բռնաբարելու մէջ: Աղջկայ խօսքով, դէպքը տեղի է ունեցել 2009 թուականի, բայց երբ Ռոնալդուն իրեն վճարել է 375 միլիոն տոլար լռութեան համար, նա յայտարարութիւնը հետ է վերցրել ոստիկանութիւնից: Ֆուտպոլիստն ասել է, որ աղջիկը ստում է, խոստացել է դատի տալ ՁԼՄ-ին, ով հրապարակել է ամերիկուհու յայտարարութիւնը:*

## Նեյմարը Ցանկանում է, որ Պոգբան ՊՍԺ Տեղափոխուի

*ՊՍԺ-ի յարձակուող Նեյմարը ցանկանում է իր թիմում տեսնել «Մանչեսթեր Եունայթեդի» կիսապաշտպան Պոլ Պոգբային:*

*Աւելի վաղ տեղեկութիւն էր տարածուել, որ 25-ամեայ կիսապաշտպանը կարող է լքել անգլիական ակումբը «կարմիր սատանաների» գլխաւոր մարզիչ Ժոզէ Մոուրինիոյի հետ վատ յարաբերութիւնների համար:*

*Ըստ «Goal»-ի, Սեպտեմբերի վերջում Նեյմարը զանգահարել էր Պոգբային եւ խնդրել նրան տեղափոխուել ՊՍԺ:*